

Ն Ո Ր
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՄԱՆՆԵ ՀԱՄԵՄԱՏ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ

Ա. Մ. ԳՐԻՂԳԱՇԵԱՆԻ



Կ. ՊՕԼԻՍ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎԱՆՓԱՅ ԳՐԱՍՅԵԱՆ

— 1878 —

2054

Ի ԳՐԱՅ
ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷԶՄԻՆՃԻՆԻ
Խ. 15.



~~1416~~

141
II - 216

~~2416~~

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒ

ԲՆԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՄԱՆՅ ՀԱՄԵՄԱՏ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ

Ա. Մ. ԳԱՐՈԳԱՇԵԱՆԷ

7054



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԵՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎԱՅՖ Յ ԳԱՎԱՑԵԱՆ

— 1878 —



Աշխարհագրութեան այս նոր դասագիրքը քաղուած է Պէրլինի բարձրագոյն դպրոցաց գերմաներէն աշխարհագրութեան ընդարձակ դասագրին 1877 ի և վերջին ապագրութենէն որ աշխարհագրական նորագոյն տեղեկութեանց համեմատ սրբագրուած է:


Ըստ կարի ջանացինք մեր այս դասագիրքն յարմար գործել մեր դպրոցաց պիտոյից՝ փոյթ տանելով որ համառօտութեան հետ ամէն կարեւոր աշխարհագրական դիտելիք պարունակէ:

Բնական մասին մէջ շատ ընդհանուր դիտելիքներ միայն դրինք, քանզի բնական աշխարհագրութեան վերաբերեալ կարծուած շատ մասնաւոր տեղեկութիւններ բնական դիտութեան և բնական պատմութեան կը վերաբերին մանաւանդ քան Աշխարհագրութեան:

Ուսումնական մասը կամ Տիեզերագրութիւնը որ զատ գիրք է՝ դիտմամբ ընդարձակագոյն է, և տիեզերաց դրութիւնը ճանչնալու ամէն կարեւոր տեղեկութիւն կը պարունակէ: Իւրաքանչիւր երեւութի համառօտ քա-

ցատրութիւնը դնելէն ետքը զոր աշակերտք կրնան գրեթէ բառ առ բառ միտք առնուլ, շատ տեղ մանր գրով ալ ընդարձակ տեղեկութիւն տրուած է նախընթաց բացատրութիւնը լուսաւորելու համար:

Պէտք է գիտնալ որ դասագիրք մը ամէն աստիճանի և ընդունակութեան տղայոց միանգամայն յարմար չի կրնար ըլլալ: Ուստի եթէ դաստոտուն բան մը աւելորդ կը կարծէ այս ինչ դասու աշակերտաց համար, զոր օրինակ թըլական տեղեկութիւններն, ինչպէս այլ և այլ քաղաքաց բնակիչներուն թիւը, կրնայ զանց ընել, դէթ ըստ մասին, տղայոց միտք առնել տալու, մայրաքաղաքաց կամ կարեւոր համարուած քաղաքաց բնակիչներուն թիւը միայն ուսուցանելով:



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ԴԱՍ Ա.

ՀԱՐՑՈՒՄ. Քաղաքական աշխարհագրութիւնն ինչ կը սորվեցնէ:

ՊԱՏԱՍԻՍՆ. Քաղաքական աշխարհագրութիւնը կը սորվեցնէ այլեւայլ բաժանումները զոր մարդիկ ըրած են երկրիս երեսը բաղկացնող ծովուն և ցամաքին վրայ. ինչպէս նաեւ այն բաժանումներուն տրուած անունները, մարդոց թիւը, ցեղերը, կրօնքները, անոնց բնակութեան տեղերը, կառավարութիւնները, և ուրիշ ասոնց նման բաներ:

Հ. Երկրիս երեսը քանի կը բաժնուի:

Պ. Երկրիս երեսը կը բաժնուի երկու. հասարակածն մաս կամ ցածր, և լայն մաս կամ ջուր:

Երկրիս երեսին երեք բաւորոյրը ($\frac{5}{12}$) ջուր, մէկ բաւորոյրը ($\frac{1}{4}$) միայն ցամաք է. ցամաքին ալ գրեթէ երեք բաւորոյրը Հիւսիսային կիսագունտին վրայ է, Հարաւային կիսագունտը մեծաւ մասամբ ջրով ծածկուած է:

Հ. Հիւսիս և հարաւ բսելով ինչ կը հասկցուի:

Պ. Հիւսիս և հարաւ երկրիս կողմերուն անունն

ներն են : Երկրիս վրայ շրջ կոչ կը մտածուի , որ են .

1. Արեւելք՝ որ երկրիս այն կողմն է ուր առաւօտուն արեգակը կ'ելլէ :

2. Արեւմուտք՝ անոր հակառակ կողմն է ուր արեգակն իրիկունները կը մտնէ :

3. Հիւսիս՝ որ երեսը դէպ արեւելք դարձնողին յիւսիս կողմը կ'իյնայ . և

4. Հարաւ՝ որ հիւսիսին հակառակ կողմն է , և երեսը դէպ արեւելք դարձնողին աջ կողմը կ'իյնայ :

Հիւսիսայն արեւելք կամ Արեւելեան հիւսիս ըսելով հարաւին և արեւելքին մէջտեղը կ'իմացուի . Հարաւայն արեւելք կամ Արեւելեան հարաւ՝ հարաւին և արեւելքին մէջտեղն է : Ասոնց հակառակ կողմերը կը կոչուին Հիւսիսայն արեւմուտք կամ Արեւմուտեան հիւսիս , և Հարաւայն արեւմուտք կամ Արեւմուտեան հարաւ :

Աշխարհացոյցներու վրայ թուղթին վերի դին միշտ հիւսիս է , վարի դին՝ հարաւ . աշխարհացոյցն այսպէս բանուղին աջ կողմն արեւելք է , ձախ կողմն՝ արեւմուտք :

Հ. Աշխարհացոյցն ինչ է :

Պ. Աշխարհացոյց կ'ըսուին այն թուղթերը որոնց վրայ այլեւայլ զիծերով , նշաններով և գոյներով կը նշանակուին երկրիս երեսին վրայ ցամաքին և ջուրին մասերը , ցամաքին վրայ այլեւայլ տէրութեանց տեղերը , լեռներ , գետեր , բազաքներ իրենց անուններովը :

Հ. Դանի տեսակ աշխարհացոյց կայ :

Պ. Աշխարհացոյցը երկու տեսակ է , Հարաւ-

հարաւ և Մասնագումար : Հարթագունտը երկրիս ամբողջ երեսը երկու բալորակներու մէջ գծուած կը ցուցնէ . Մասնագունտը երկրիս երեսին մէկ մասը միայն կը ցուցնէ , զոր օրինակ՝ Եւրոպա կամ Ասիա . և կամ թագաւորութիւն մը կամ անոր մէկ մասը միայն , ինչպէս Թուրքիա կամ Հայաստան :

Երբ բոլոր երկիր կամ անոր մէկ բաժինը մաս մաս քանի մը աշխարհացոյցներու վրայ նշանակուած է , այն աշխարհացոյցները մէկտեղ Արլաս կը կոչուին :



Դ Ա Ս Բ .

Հ. Ըսիր թէ երկրիս երեսը երկու կը բաժնուի , հաստատուն մաս կամ ցամաք , և լոյժ մաս կամ ջուր : Կրնաս ըսել թէ հաստատուն մասը կամ ցամաքը քանի կը բաժնուի , և այն բաժանումներն ինչպէս կը կոչուին :

Պ. Երկրիս երեսին վրայ ցամաքը հինգ կը բաժնուի որոնք երկրիս մասերը կը կոչուին , և են՝ Եւրոպա , Ասիա , Աֆրիկէ , Ամերիկա և Ովկէանիս :

Առջի երեքը , Եւրոպա , Ասիա , Աֆրիկէ , կը կոչուին հին ցամաք կամ հին աշխարհ , քանզի այս մասերն հնուց 'ի վեր ծանօթ են : Չորրորդ մասն , Ամերիկա , կը կոչուի նոր ցամաք կամ նոր աշխարհ , քանզի երկրիս այս մասն հին ատենը ծանօթ չէր . 1492 ին Քրիստափոր Կոլումպոս անուանի ձենովացին գտաւ անոր մէկ մասը , և ապա հետզհետէ բոլոր այն ցամաքը գտնուելով Եւրոպացի զաղթականներով ծաղկեցաւ :

Հինգերորդ մասը որ է Ովկիանիա, կը պարունակէ մեծ կղզի մը որ Ասորոս կամ Նոր Հրապարակ կը կոչուի, և անկէ քիչ շատ հեռու շատ մը կղզիներ: Երկրիս այս մասն ալ նոր, այսինքն՝ 1600 էն ետքը, սկսաւ ճանչցուիլ:

2. Երկրիս երեսին վրայ լոյծ մասը կամ ջուրը քանի կը բաժնուի, և այն բաժանումներն ինչ կը կոչուին:

Պ. Երկրիս երեսին վրայ ջուրը կը բաժնուի շքս մաս, որ ընդհանուր անուամբ Ովկիանոս կը կոչուին, և են՝

1. Հիսթալիս և հարաւային սարահարաւ Ովկիանոս.
2. Արլանդեան Ովկիանոս:
3. Մեծ կամ Խաղաղական Ովկիանոս, և
4. Հնարկային Ովկիանոս:

Հ. Ովկիանոսներէն զատ՝ երկրիս երեսին վրայ գտնուած այլեւայլ տեսակ ջուրերն ինչպէս կը կոչուին:

Պ. Ովկիանոսներէն զատ՝ երկրիս երեսին վրայ գտնուած այլեւայլ տեսակ ջուրեր կը կոչուին,

1. Ծով, 2. Լիճ, 3. Գետ, 4. Ծոց, 5. Նեղոց,
6. Միջերկրական ծով և 7. Արշակունիք:

1. Ծով կ'ըսուին այն աղի ջուրերը որ Ովկիանոսէ մը փոքր են: Գլխաւոր ծով կը կոչուի ծով մը որ Ովկիանոսէ մը կը կազմուի. Երկրորդական ծով կ'ըսուի այն ծովը որ զվսաւոր ծովէ մը կը կազմուի:

2. Լիճ կ'ըսուին այն մշտակայ անոյշ ջուրերը որ ամէն կողմէն ցամաքով պատած են, և որոնց ջուրը վազուն չէ: Մեծամեծ լիճերը ծովայն կը կոչուին. Մօր կամ հալի կը կոչուին միշտ ջրոտ տե-

ղեր ուր շամբ (եղէզ) կամ ջրային տունկեր բուսած են:

3. Գետ կ'ըսուին այն անոյշ և վազուն ջուրերը որ սովորաբար լեռան մը ստորոտէն բխելով, և շատ անգամ իրենց մէջ ուրիշ վազուն ջուրեր առնելով կ'ըլլան ծով մը կը թափին. իսկ այն վազուն ջուրերը որ գետի մը մէջ կը թափին՝ Գետակ կ'ըսուին: Այն տեղը ուր գետ մը ծովը կը թափի՝ գետին քերանը կը կոչուի. իսկ գետի մը և գետակի մը իրարու խառնուած տեղը կը կոչուի Խառնուրդ գետոյ:

Գետերուն և գետակներուն երկու քովերը կը կոչուին Եղեղ կամ Ափանդ: Գետի կամ գետակի մը այն եզրը որ ջուրին հոսանքին հետ իջնողին աջ կողմը կ'իյնայ՝ Աջակողման փն կ'ըսուի. անոր դիմացի կողմը՝ Չափակողման փն:

4. Ծոց կամ Զովածոց կ'ըսուի ծովի մը այն մասը որ ներս դէպ ՚ի ցամաքը մտած է: Եթէ ծոց վածոցը փոքր է, Խոր կը կոչուի:

5. Նեղոց կը կոչուի նեղ ծով մը որմէ ծովէ ծով կ'անցնուի: Լայն նեղուց մը Զրանց կ'ըսուի:

6. Միջերկրական ծով կամ Միջերկրական կ'ըսուի ծով մը որ ամէն կողմանէ ցամաքով պատած ըլլալով, նեղ պարանոցով մը միայն դուրսի ծովի մը հետ հաղորդութիւն ունի:

7. Արշակունիք կը կոչուի ծով մը ուր իրարու մօտ շատ կղզիներ կամ կղզիներու խումբեր կան:





Ը. Ցամաքի մը մասերն իրենց այլեւայլ ձեւին կամ որպիսութեանը նայելով քննչպէս կը կոչուին:

Պ. Ցամաքի մը մասերն իրենց այլեւայլ ձեւին կամ որպիսութեանը նայելով կը կոչուին 1. Թեւ-լիւղի, 2. Լեղ- , 3. Ծ-վեր, 4. Լե- , 5. Գալա- քեռն, 6. Զոր, 7. Կղի, 8. Ծանձաղ և 9. Խորակ:

1. Թեւ-լիւղն չորս դիէն ջրով պատած, և մի- այն մէկ ծայրով ցամաքի մը հետ կցուած երկիր է: Թերակղզին ցամաքին հետ կցող մասին Պա- րանց կ'ըսուի: Եթէ պարանոցը շատ լայն է, Թե- րակղզին Ցամաւիղի կը կոչուի:

2. Լեղ- կ'ըսուի նեղ ցամաք մը որ դէպ 'ի ծով երկնցած է: Եթէ այսպէս դէպ 'ի ծով եր- կընցած ցամաք մը շատ բարձր է, Գլ-ի կամ Հր-անոթն կը կոչուի:

3. Ծ-վեր կ'ըսուի ցամաքին այն մասը որ ձո- վին կից է: Ծովին հետ դրեթէ հաւասար ցած և ընդարձակ ծովեզր մը Ծ-վին կը կոչուի:

4. Լե- կ'ըսուի հողոյ կամ ապառաժի ահա- զին զանգուած մը որ ցամաքի մը վրայ կը բարձ- րանայ դէպ 'ի վեր' երթալով ամփոփուելով, այն- պէս որ կողերն աւելի կամ նուազ զառ 'ի վեր կը ձեւանան: Իրարու կից լեռներու շարքին Շղթայ կամ Բոթի լեռանց (լեռնազօտի) անունը կը տրը- ուի: Լեռան մը կոնածեւ կամ սուր ծայրին Կաթաբ կամ Գաթաբ կ'ըսուի: Լեռնաբաշտ կ'ըսուի լեռան մը գլուխը որ հարթ է: Մանր լեռանց Բլա-ր կ'ըս- ուի: Կող կ'ըսուին լեռներու զօտոյ մը երկու- հակառակ զառիվայրերը: Ծովի կամ գետի մը

Ա-աղանը կամ Հ-վեր կ'ըսուի ընդարձակ երկիր մը որուն ջուրերը կը թափին այն ծովը կամ գետը:

Հր-անոթ կը կոչուի լեռ մը որ ատեն ատեն բռնկելով Հր-բերան կամ Խ-անոթն կոչուած ծակէ մը դուրս կ'արձակէ բոց, մոխիր և լա-ս կոչուած նիւթը, երբեմն նաեւ ջուր և ցեխ:

3. Գալա-քեռն կը կոչուի երկիր մը որ ընդար- ձակ և տափարակ է: Եթէ տափարակն աւա- ղուտ է, Ան-աղաբ կ'ըսուի: Աւաղուտ անապատ- ներու մէջ դալարագեղ և ջրարբի տեղերուն Ովա- օն կ'ըսուի:

6. Զոր կ'ըսուի դաշտ մը որ երկու լեռանց մէջտեղն է: Եթէ ձոր մը շատ նեղ, մթին և խո- նաւ է, Ծ-ակ կ'ըսուի:

7. Կղի փոքր ցամաք է՝ ամէն կողմանէ ջրով պատած: Իրարու մօտ մանր մանր կղզիներու՝ Խ-մթ կղի-աց (կղզեխումբ) կ'ըսուի:

8. Ծանձաղ կամ Զանձաղաբ կ'ըսուին ծովուն մէջ սակաւաջուր տեղեր ուր նաւ չի կրնար անց- նիլ առանց խրելու:

9. Խորակ կ'ըսուի ծովուն մէջ ջուրին երեսին մօտ կամ երեսէն վեր բարձրացած քար մը: Եթէ այսպիսի քարեր իրարու մօտ կամ քովէ քով շատ են, Խ-թէ կը կոչուին:



Ը. Երկրիս բոլոր բնակչաց թիւը սրճափ է:
Պ. Երկրիս բոլոր բնակչաց թիւն է ըստ նո- րագոյն հաշուոց իբր 1,300,000,000:

| | | | |
|----------|------|-------------|--------|
| Եւրոպա | ունի | 300,000,000 | բնակիչ |
| Ասիա | » | 730,000,000 | » |
| Ափրիկէ | » | 120,000,000 | » |
| Ամերիկա | » | 120,000,000 | » |
| Ովկիանիա | » | 30,000,000 | » |

Հ. Մարդկային ազգը բանի՛ր ցեղ կը բաժնուի :

Պ. Կերպարանաց, գունոյ և գանկի ձեւին նա-
յելով բոլոր մարդկային ազգը կը բաժնուի հինգ
գլխաւոր ցեղ :

1. Կովկասեան կամ Հնդեւրոպական ցեղը . սպի-
տակ գունով, վայելչահասակ, գեղեցկադէմ, ե-
րեսին անկիւնը գրեթէ ուղիղ : Այս ցեղը դէպ
'ի հիւսիս խարտեաչ է, դէպ 'ի հարաւ թխադոյն :
Կովկասեան ցեղին կը վերաբերին արեւմտեան
Ասիոյ և գրեթէ բոլոր Եւրոպայի բնակիչք և ա-
նոնց գաղթականները : Այս ցեղն հիմա իբր 500
միլիոն է :

2. Մոնղոլեան ցեղը . դեղնագոյն, տափաքիթ,
մեծականջ, թանձրայտ, շեղակն : Այս ցեղին կը
վերաբերին հիւսիսային և արեւմտեան Ասիոյ
բնակիչները, ինչպէս Սիպերացիք, Թաթարք,
Չինացիք, Ճաբոնք : Մոնկոլեան ցեղն ալ գրե-
թէ 500 միլիոն է :

3. Աֆրիկեան ցեղը . սրնձագոյն, արծուունգն,
խորակն, կունտ 'ի յետուստ : Այս ցեղը տակաւ
սպառուելու վրայ է . 13 միլիոն միայն կը կարծուի :

4. Մալայեան ցեղը . դիմօք նման Եւրոպակա-
նին բայց թխադոյն է : Այս ցեղին կը վերաբերին
խաղաղական ովկիանոսի կղզեաց բնակիչները,
բաց 'ի Բաբուաներէն, այսինքն Աւստրալիոյ
բնակիչներէն որ սեաւ են բայց եթովպական ցե-

ղին չեն վերաբերիր : Այս ցեղն իբր 30 միլիոն
կը հաշուուի :

5. Եմպուական ցեղը . սեւամորթ, ասրանման
գանգրահեր, լայնաշուրթն, տափաքիթ : Ափրի-
կէի Սեւերն այս ցեղին կը վերաբերին, և իբր
100 միլիոն կը կարծուին :

Հ. Այս այլեւայլ ցեղ մարդոց մէջ քնն և ուր-
չափ լեզու կը խօսուի :

Պ. Այս այլեւայլ ցեղ մարդոց մէջ հազարաւոր
լեզուներ կը խօսուին որ իրարմէ բոլորովին տար-
բեր կ'երեւան, բայց և այնպէս անոնց մեծ մա-
օր երեք գլխաւոր տեսակի կը վերաբերին :

1. Մոնղոլեան լեզուներ : Այս լեզուներուն բա-
ուերը միավանկ են և առանց հոլովման և խո-
նարհման : Այս տեսակին կը վերաբերի Չինաց
լեզուն :

2. Եւրոպայ լեզուներ : Ասոնք ալ հոլով և խո-
նարհում չունենալով, այս բերականական ձե-
ւերը կը հասկցնեն սովորաբար բառին վերջը, եր-
բեմն ալ մէջը ուրիշ բառեր կցելով : Այս տեսա-
կին կը վերաբերին Ֆիննեան լեզուներն, ինչպէս
Ունկալերէնը, նաեւ Ամերիկեան ցեղերուն լե-
զուները :

3. Քերականական լեզուներ : Ասոնք հոլովման և
խոնարհման ձեւեր ունին : Քերականական լե-
զուներն երկու ցեղ են՝ Հնդեւրոպական և Սեմական :
Հնտեւրոպականին կը վերաբերին Յունարէնը,
Լատիներէնը, Հայերէնը, Գերմաներէնը, Կեղ-
տեան, Սլաւեան, Իրանեան և Ասոսքորիդ (չըն-
դիկ) լեզուները : Սեմականին կը վերաբերին հին
Եբրայեցերէնը, Քաղղէարէնը, Ասորերէնը և Ա-

բաբերէնք: Քերականական լեզուները, մանաւանդ Հնաեւրոպական լեզուք, ընտրելագոյն և ազնուագոյն են:

Լեզուները կը բաժնուին դարձեալ Մե-ե-լ, այսինքն որ չեն խօսուիր, և կենդանի, այսինքն՝ անոնք որ կը խօսուին: Դարձեալ իւրաքանչիւր լեզու աւելի կամ նուազ բարասելչանք ունի:



Ի Ա Ս Ե .

Հ. Աշխարհիս վրայ քանի տեսակ կրօնք կայ:

Պ. Աշխարհիս վրայ շատ կրօնքներ կան, բայց ամէնքն ալ սա երկու տեսակին կը վերածուին. Միաստուածեան և Բազմաստուածեան:

Միաստուածեան են.

1. Քրիստոնեայք, 337 միլիոն, որ երեք գըլխաւոր ճիւղ կը բաժնուին Արեւմտեան Եկեղեցի (կաթոլիկ), Արեւելեան Եկեղեցի (Յոյնք և Հայք) և Բողոքական Եկեղեցի:

2. Հրեայք, 7 միլիոն. 3 1/2 միլիոնը Եւրոպա կը բաժուին քանի մը ազանդներու, Գերայիտ, Թալմուսիտ և Բաբայիտ:

3. Մահմեդականք, 156 միլիոն: Ասոնք ալ Միւսնի, Շիի և Վահապի կոչուած ազանդներու կը բաժնուուին:

Բազմաստուածեան են.

1. Պոհիմեանք, Հնդկաստանի մէջ.

2. Պոպոլայեանք, Սէյլան կղզին, Քոչինչինի, Ճաբոնի և Չինու. մէջ:

3. Դիւնոպոլոս կամ Ֆեթիշեանք, փորթոկեզե-

րէն Ֆեթիսո բառէն որ դիւնոպոլոս կը նշանակէ: Ասոնց մեծ մասն Ափրիկէի մէջ է:

Բազմաստուածեան կրօնք դաւանողներուն թիւը 800 միլիոնի կը հասնի:

Հ. Մարդիկ իրենց ապրելու կերպին նայելով քանի տեսակ են:

Պ. Մարդիկ իրենց ապրելու կերպին նայելով երեք կարգ կը բաժնուին:

1. Վայրենի ազգեր որ որսորդութեամբ կամ ձկնորսութեամբ կ'ապրին. ասոնք մեծաւ մասամբ անտառներու, սյրերու կամ հիւղերու մէջ կը բնակին:

2. Հոգի կամ Բախտական ազգեր, ասոնք իրենց հօտերուն արդիւնքէն կ'ապրին, և անոնց հետ արօտի համար տեղէ տեղ պտտելով վրաններու տակ կը բնակին, յուստի և Վրանաբնակ ալ կ'ըսուին:

Այս երկու կարգ մարդիկ, մանաւանդ առջինները, կառավարութիւն, օրէնք, ուսում և դպրութիւն, արուեստ և վաճառականութիւն չունին. քանի մը շատ հասարակ արուեստներ զոր ոմանք ունին, ինչպէս ոստայնանկութիւն, դարբնութիւն, շատ անկատար են:

3. Հասարակական կամ Բազմակիւրթ ազգեր: Ասոնք, բաց ի հողագործութենէ որ հաստատուն բնակութիւն ունենալու առաջին պայմանն է՝ ունին նաեւ այգեգործութիւն, վաճառականութիւն, նաւարկութիւն, այլեայլ ձեռագործական կամ մեքենական արուեստներ, զիր կամ դպրութիւն, գիտութիւններ, զեղարուեստներ, բազմազգիտութիւն, օրէնք և կառավարութիւն:

ԴԱՍ Զ.

Հ. Քաղաքակիրթ ազգաց մէջ քանի տեսակ կառավարութիւն կայ :

Պ. Քաղաքակիրթ ազգաց մէջ երկու տեսակ կառավարութիւն կայ. Միապետական և Բազմապետական :

1. Միապետական կառավարութեան մէջ իշխողը մի է, ցկեանս, շատ անգամ նաեւ ժառանգական, և կը կոչուի Կայսր, Թագաւոր, Իշխան, Դուռն :

Միապետութիւնը երկու կը բաժնուի, Ա. Բազմապետութիւն, որուն մէջ ամէն օրէնք իշխողին կամքէն կը բխեն. Բ. Չափաօրէն կամ Սահմանադրական միապետութիւն որուն մէջ ժողովուրդին կողմէն ընտրեալ երեսօնական ժողով մը օրէնադէր իշխանութեան մասնակից է, և գործարար իշխանութեան կամ վարչ-ձեռն վրայ կը հսկէ :

2. Բազմապետական իշխանութիւնն ալ երկու կը բաժնուի, Ա. Հանրապետութիւն որուն մէջ բերնօրէն իշխանութիւնը կամ վեհապետութիւնը բոլոր ժողովուրդին ձեռքն է, և Բ. Ազնուապետութիւն որուն մէջ քանի մը երեւելի ընտանիք միայն կը վարեն վեհապետութիւնը :

Բազմապետական կառավարութեանց մէջ իշխող չկայ, գործադիր իշխանութիւնը վարելու համար Նախագահ մը միայն կ'ընտրուի քանի մը տարին անգամ մը ժողովրդեան քուէով :

Հ. Քաղաքակիրթ ազգաց բնակութեան տեսակներն ինչ կը կոչուին, և ինչ շէնքեր և հաստատութիւններ կան անոնց մէջ :

Պ. Քաղաքակիրթ ազգաց բնակութեան տեսակները կը կոչուին Քաղաք կամ Բերդաւան, եթէ քաղաքը պարսպաւոր է, Աւան և Գիւղ : Ասոնց մէջ, բաց ի հասարակ տուներէ որոնց մէջ ընտանիք կը բնակին, կան այլեւայլ հասարակաց շէնքեր, շորօրինակ՝ իշխանին պալատը, կառավարութեան գործերուն համար Պաշտօնարաններ, Զօրանոց, Նաւարան, Զինարան, Եկեղեցիներ, այլեւայլ տեսակ Դարմանոցներ, հասարակաց Դպրոցներ, Վարժարաններ, Համալսարան, Տպարաններ, Գրատուններ, Թանգարաններ, այլեւայլ տեսակ Դործարաններ, Հրապարակներ, Հասարակաց պարտէզներ, Վաճառանոցներ, զբոսայտներ (պանդա), Նաւահանգիստ և ուրիշ ասոնց նման հաստատութիւններ :

Գիւղերը կը կոչուին Քաղաք կամ Բերդաւան, եթէ քաղաքը պարսպաւոր է, Աւան և Գիւղ : Ասոնց մէջ, բաց ի հասարակ տուներէ որոնց մէջ ընտանիք կը բնակին, կան այլեւայլ հասարակաց շէնքեր, շորօրինակ՝ իշխանին պալատը, կառավարութեան գործերուն համար Պաշտօնարաններ, Զօրանոց, Նաւարան, Զինարան, Եկեղեցիներ, այլեւայլ տեսակ Դարմանոցներ, հասարակաց Դպրոցներ, Վարժարաններ, Համալսարան, Տպարաններ, Գրատուններ, Թանգարաններ, այլեւայլ տեսակ Դործարաններ, Հրապարակներ, Հասարակաց պարտէզներ, Վաճառանոցներ, զբոսայտներ (պանդա), Նաւահանգիստ և ուրիշ ասոնց նման հաստատութիւններ :

2054

Ե Ի Ր Ո Պ Ա.

ԴԱՍ Է.

Հ. Եւրոպա մը կիսագունտին վրայ է, որոնք են անոր սահմանները և բնակչաց թիւը :

Պ. Եւրոպա հին ցամաքը պարունակող կիսագունտին հիւսիսային արեւմտեան կողմն է : Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ Ովկիանոսը, արեւմուտքէն՝ Ազլանդեան Ովկիանոսը, հարավէն՝ Միջերկրական և Սեաւ ծովերը որոնք Ազլանդեան ովկիանոսին մասերն են, իսկ արեւելքէն՝ Ուրալ և Կովկաս լեռները որովք Եւրոպա կը բաժնուի Ասիոյ ցամաքէն : Բնակչաց թիւն է 300 միլիոն :



2. Եւրոպա քանի մաս կը բաժնուի, և իւրաքանչիւր մաս ճը Տէրութեան կամ ազգի կը վերաբերի:

Պ. Եւրոպա շքս մաս կը բաժնուի, Հարաւային, Միջին, Հիւսիսային և Արեւելեան:

Ա. Հարաւային Եւրոպա ունի երեք ցամաքակղզի:

1. Յունական ցամաքիչի որ կը պարունակէ Ա. Եւրոպական Թուրքիա և Բ. Յունաստան:

2. Իրաւական ցամաքիչի որ կը վերաբերի Խոսալիոյ թագաւորութեան:

3. Իբերեան կամ Պիրենեան ցամաքիչի որ կը պարունակէ Ա. Սպանիա և Բ. Լուսիտանիա կամ Փորթոկալ:

Բ. Միջին Եւրոպա կը պարունակէ վեց Տէրութիւն:

1. Գաղիա:

2. Հելլենիս (Չուիցէրա):

3. Հոլանդա:

4. Բելգիէ (Պէլճիզա):

5. Գերմանիա:

6. Աստրոյ — Հոնկարիա:

Գ. Հիւսիսային Եւրոպա ունի երեք Տէրութիւն:

1. Սկանդինաւեան ցամաքիչի որ կը բաղկանայ Շուեարի և Նորուեկիոյ թագաւորութիւններէն:

2. Գանէա կամ Տանիմարիա:

3. Մեծն Բրիտանիա (Անգղիա):

Դ. Արեւելեան Եւրոպա ունի մէկ Տէրութիւն միայն որ է Ռուսիա:

Ը. Եւրոպայի այժմու տիրող ազգերն ինչ տոհմերու կը վերաբերին:

Պ. Եւրոպայի այժմու տիրող ազգերը կը վերաբերին Բոմանեան, Գերմանական և Սլաւեան տոհմերուն: Բոմանեան ազգերն են իբր 97 միլիոն և կը բնակին Եւրոպայի Հարաւային արեւմտեան և Արեւմտեան կողմերը. ասոնք են Գաղիացիք, Սպանիացիք և Իտալացիք. ասոնց կրօնքն ընդհանրապէս Հռոմէական է:

Գերմանական ազգերն են իբր 92 միլիոն և կը բնակին Հիւսիսային և Միջին Եւրոպա. ասոնք են՝ Անգղիացիք, Շուեարք, Գանիացիք և Գերմանացիք. ասոնց կրօնքն ընդհանրապէս Բողոքական է:

Սլաւեան ազգերն են իբր 81 միլիոն. ասոնք շատ ճիւղերու կը բաժնուին, ինչպէս Լեհք, Պոլհեմիացիք, Խոուաթք, բայց տիրող ազգ միայն Ռուսն է: Ասոնք Եւրոպայի արեւելեան կողմն են և ընդհանրապէս Յունադաւան են:

Ը. Եւրոպայի գլխաւոր ծովերը որոնք են:

Պ. Եւրոպայի գլխաւոր ծովերն են

1. Սպիտակ ծովը որ Հիւսիսային սառուցեալ ովկիանոսէն կը կազմուի:

2. Պարթի ծովը:

3. Հիւսիսային կամ Գերմանական ծովը:

4. Իրաւայի ծովը:


5. Պիտայեան կամ Կասպիանեան ծովը, որ Ժովաթոյ ալ կըսուի:

6. Միջերկրական ծովը:

Այս հինգ ծովերը կը կազմուին Ադրանդեան ովկիանոսէն:

Միջերկրական ծովէն ալ կը կազմուին Հեատեալ եւ Երկրորդական ծովերը:

- Ա. Պերենայան ծովը , Իտալիոյ արեւմտեան դին :
- Բ. Արբեկան ծովը , Իտալիոյ արեւելեան դին :
- Գ. Յնիկան ծովը , Իտալիոյ և Յունաստանի մէջտեղը :
- Դ. Եֆեկան ծովը , որ Յունական Արշեպեղաբոսալ կ'ըսուի :
- Ե. Պրոպոնտիս կամ Մարմարայի ծովը :
- Զ. Սեւ ծովը հանդերձ Ալախոս ծովով :



ԴԱՍ Ը.

- Հ. Եւրոպայի գլխաւոր ծովածոցերը որոնք են :
- Պ. Եւրոպայի գլխաւոր ծովածոցերն են
- 1. Պոնտիոյ , Ֆինլանդի , Լիւանիոյ և Տանցիոյ ծոցերը՝ Պալդիկ ծովուն մէջ :
- 2. Զոնթերդէի՝ Հիւսիսային ծովուն մէջ :
- 3. Լիւնի կամ Պիւքայեան ծովածոցը՝ Միջերկրական ծովուն մէջ , Գաղիոյ հարաւային եզերքը :
- 4. Ճենովայի ծովածոցը՝ Միջերկրական ծովուն մէջ , Իտալիոյ եզերքը :
- 5. Տարենտոնի կամ Դարենոնի ծովածոցը՝ Յոնիական ծովուն մէջ , Իտալիոյ ծայրը :
- 6. Վենետիկոյ և Թրեւորի ծովածոցերն՝ Ադրիական ծովուն մէջ :
- 7. Լեքսոնի , Բարբոսի , Կորնիսի , Նաֆլիոյ և Արխեոնի ծովածոցերը՝ Յունաստանի եզերքը :
- 8. Վալայի և Թեսալոնիկի ծովածոցերն՝ Արշեպեղաբոսի մէջ :
- 9. Օթեսայի և Բերեգոսի ծովածոցերը՝ Սեւ ծովուն մէջ :

- Հ. Եւրոպայի ծովակները կամ մեծամեծ լիճերը որոնք են :
- Պ. Եւրոպայի ծովակները կամ մեծամեծ լիճերն են
- 1. Օնէկա , Լարոնա , Սայմա , Իլլիւն , Բեյքոսա , և Պիկոյ կամ Սոլիքոսի լիճ՝ Ռուսիոյ մէջ :
- 2. Մելար , Վէներ , Վեդրեր և Թուննեա՝ Շուեյտի մէջ :
- 3. Պալարոն և Նայսիոնի՝ Աւստրիոյ մէջ :
- 4. Նեռարեի , Ճինեւայի , Գոստոնցայի , Յիւրիէի Լոնցերնի , Լոնանոյի ծովակները՝ Հելուեաիոյ կամ Զուիցերայի մէջ :
- 5. Մանճիորէ կոչուած ծովակը , և Գոմոյի , Կարպայի , Փերուճիոյ , Պուլենայի և Չեւանոյի ծովակներն՝ Իտալիոյ մէջ :
- Հ. Եւրոպայի նեղուցները որոնք են .
- Պ. Եւրոպայի նեղուցներն են
- 1. Վայնոյի նեղուցը՝ Հիւսիսային Սառուցեալ ծովուն մէջ :
- 2. Ստաիբերտ և Գարեկար որ Հիւսիսային ծովը Պալդիկ ծովուն հետ կը կցեն :
- 3. Սոնոս , Ջի և ֆոտր Պելո՝ Դանիական կղզիներուն մէջտեղ :
- 4. Սոնթ Գեորգոյ ջրանցքն ու Հիսթոնի նեղուցը որոց մին՝ Հարաւէն , միւսը Հիւսիսէն կը տանին Իրլանտայի ծովը :
- 5. Գալէի անցքը՝ Հիւսիսային ծովուն և Մանչի մէջտեղ :
- 6. Մանչի նեղուցը՝ Գալէի անցքին և Ադլանդեան Ովկիանոսի մէջտեղ :
- 7. Ճեպրալարի նեղուցը՝ Ատլանդեան Ովկիանոսի և Միջերկրական ծովուն մէջտեղ :

8. Վնէիքսիտի նեղուցը՝ Սարտենիոյ և Գորսի գայի մէջտեղ:

9. Մեհնայի նեղուցը՝ Իտալիոյ և Սիկիլիոյ մէջտեղ:

10. Օրբանդի ջրանցքը՝ Յոնիական և Ադրիական ծովերուն մէջտեղ:

11. Տարբանէլի (Չանագ գալէի) նեղուցը՝ Արշիպեղապոսի և Մարմարայի մէջտեղ:

12. Կոստանդնուպոլսոյ կամ Պոսֆորի նեղուցը՝ Մարմարայի և Սեւ ծովուն մէջտեղ:

13. Ենէիքսիտի նեղուցը՝ Սեւ ծովուն և Ազախու ծովուն մէջտեղ:



ԴԱՍ Թ.

Հ. Եւրոպիոյ գետերը որոնք են և ո՞ր ծովերը կը թափին:

Պ. Եւրոպիոյ գետերն են

| Ա. Բռնախոյ մեջ | Կէ. Երկ. | Զիւս. Սառ. Ովկ. |
|----------------|----------|-----------------|
| 1. Բէչորա | 1,200 | Հիւս. Սառ. Ովկ. |
| 2. Տվինա | 670 | Սպիտ. ծովը |
| 3. Թոունէա | 600 | Պալդ. « |
| 4. Նէվա | 75 | « « |
| 5. Տուհա | 800 | « « |
| 6. Նիեմէն | 700 | « « |
| 7. Տնիսթէր | 890 | Սեւ ծովը |
| 8. Տնիբեր | 2,000 | « « |
| 9. Տոն | 1,800 | Ազախ « |
| 10. Վոլկա | 3,700 | Կասպից ծովը |
| 11. Ուրալ | 3,100 | « « |

| Բ. Գերմանիոյ մեջ | Կէ. Երկ. | Պալդ. | Ծովը |
|------------------|----------|-------|--------------|
| 12. Վիսթուլ | 1,105 | « « | « « |
| 13. Օտէր | 900 | « « | « « |
| 14. Էլպա | 1,200 | « « | Հիւս. « |
| 15. Վէյէր | 380 | « « | « « |
| 16. Բէնոս | 1,460 | « « | « « |
| Գ. Գաղիոյ մեջ | | | |
| 17. Մէօզ | 800 | « « | « « |
| 18. Էսքոյ | 380 | « « | « « |
| 19. Սէն | 750 | « « | Մանչ |
| 20. Լուար | 985 | « « | Ատլ. Ովկ. |
| 21. Ժիրօնա | 620 | « « | « « |
| Դ. Անգլիոյ մեջ | | | |
| 22. Դամիզ | 400 | « « | Ատլ. Ովկ. |
| Ե. Իրլանտայի մեջ | | | |
| 23. Շէնըն | 220 | « « | « « |
| Զ. Սպանիոյ մեջ | | | |
| 24. Տուէրոյ | 730 | « « | « « |
| 25. Դակոյ | 1,000 | « « | « « |
| 26. Կուատիանա | 875 | « « | « « |
| 27. Կուատալբիվեր | 530 | « « | « « |
| 28. Էպրոյ | 670 | « « | Միջերկ. ծովը |
| 29. Բոն | 890 | « « | « « |
| Է. Իտալիոյ մեջ | | | |
| 30. Տիբեր | 330 | « « | « « |
| 31. Բոյ | 530 | « « | Ադրիակ. ծովը |
| 32. Ատիճէ | 350 | « « | « « |
| Ը. Թուրքիոյ մեջ | | | |
| 33. Մարիցա | 380 | « « | Արշիպեղապոս |
| 34. Դանուբ | 3,000 | « « | Սեւ ծովը |



ԴԱՍ Ժ.

- Հ. Եւրոպայի գլխաւոր կղզիներն որոնք են :
- Պ. Եւրոպայի գլխաւոր կղզիներն են
- 1. Հիւսիսային Սառսցեալ Ովկիանոսի մէջ
- Ա. Սբէցդերի :
- Բ. Վայկոց և Քալիֆոյնի :
- 2. Հիւսիսային ծովուն մէջ
- Ա. Նորսիւնի կղզիք որ են՝ Լոֆֆոսընի , Տրոնի-հայի և Պէլիւնի խոփերը :
- Բ. Անգլիական կղզիք որ են՝ Մեծն Բրիտանիա , Իրլանդա , Հոսայր՝ Անգլիոյ հարաւային կողմը , Ֆերոսեր , Հելլոնդերն , Օրքնոսերն և Շեդլանդի խումբերը՝ Սկոտլանդի հիւսիսային կողմը :
- Գ. Հելլոլանդ :
- 3. Իրլանտիոյ ծովուն մէջ
- Ա. Մէն և Էնիլլա :
- Բ. Հոլանդերն կղզիք որոց գլխաւորն է Թէտուել , Զուլտէրգէի բերանը :
- 4. Պալդիկ ծովուն մէջ
- Ա. Դանիական կղզիները՝ Սեէլանդ , Ֆինլի , Լալանդ Ֆալարեր , Պառնիւլ :
- Բ. Շոտլանդի կղզիք՝ Օլանդ և Կոնլանդ :
- Գ. Րուսական կղզիք՝ Տոնոյ , Էոլէլ և Ալանդ :
- Դ. Բրուսիական կղզիք՝ Րիւկէն և Ուլկոս :
- 5. Մանչի մէջ
- Նորմաներն կղզիք՝ Ճըրդի , Կըմնդի և Օրկնէի :
- 6. Ատլանդեան Ովկիանոսի մէջ
- Ա. Իզլանդ :
- Բ. Ալորերն կղզիք , Փորթոկալէն 900 քլմ. հե-

ս. ուլ :

- 7. Միջերկրական ծովուն մէջ
- Ա. Պալարերն կղզիք՝ Մայորա , Մինորա , Իվոս և Ֆորմոզերն :
- Բ. Գորաիք :
- Գ. Սարդնիա , Էլպա ուր Նաբոլէոն Ա. արտը-ուեցաւ 1814 ին :
- Դ. Սիկիլիա :
- Ե. Լիբարերն կղզիք :
- 2. Մալթայի խումբը 4 կղզիք :
- 8. Յունիական ծովուն մէջ
- Ա. Յունական կղզիք որ են՝ Բորֆոս , Բատա , Սանդա Մարա , Թէտի , Բեֆալունիա , Զանդա , Չերիկոյ :
- Բ. Կրէտէ կամ Գանդիա :
- 9. Արքերական ծովուն մէջ
- Լիբիական (Իլիրիոյ) կղզիք :
- 10. Արչիպելագոսի մէջ
- Ա. Նեկրոսերն (Եւբէա) :
- Բ. Կիկլադերն կղզիք որոց գլխաւորներն են Սիքոս , Դելոս , Անդրոս , Նատոս , Բարոս , Սանթորին՝ հրաբուխ :
- Գ. Սֆորադերն կղզիք որոց գլխաւորներն են՝ Թատոս , Սամֆրաիլի , Իմպրոս , Լեմնոս :
- Հ. Եւրոպայի ցամաքակղզիները որոնք են .
- Պ. Եւրոպայի ցամաքակղզիներն են
- 1. Ալանդիական ցամաքակղզիներն որ կը պարու-նակէ Շուէտ և Նորուեկիա :
- 2. Դանիական ցամաքակղզիներն որ և Եուրպանտ կը կոչուի :
- 3. Իբերերն ցամաքակղզիներն որ կը պարունակէ Սպանիա և Փորթոկալ :
- 4. Իտալական ցամաքակղզիներն :

- Հ. Եւրոպայի թերակղզիները որոնք են :
- Պ. Եւրոպայի թերակղզիներն են
- 5. Մարեա կամ Պեղոպոնէս (Յունաստան) :
- 6. Գրեկ (Խըրըժ) Սեւ ծովուն մէջ :
- Հ. Եւրոպայի պարանոցները որոնք են :
- Պ. Եւրոպայի պարանոցներն են
- 1. Կրեթիոսի պարանոցը որ Մորէա կը կցէ Յունաստանի ցամաքին հետ :
- 2. Բելեոքի պարանոցը որ Քրիմէն կը կցէ Բուսիոյ ցամաքին հետ :



ԴԱՍ ԺԱ.

- Հ. Եւրոպայի գլխաւոր հրուանդանները ուրոնք են :
- Պ. Եւրոպայի գլխաւոր հրուանդաններն են
- 1. Նորո Քէն՝ Շուէտի հիւսիսային եզերքը :
- 2. Լանոս Էնո՝ Մեծին Բրիտանիոյ հարաւային եզերքը :
- 3. Քլէր և Մէլէն՝ Իրլանտայի հարաւային եզերքը :
- 4. Լա Հոկ՝ Գաղիոյ հիւսիսային եզերքը :
- 5. Յիլիսթեր՝ Սպանիոյ արեւմտեան եզերքը :
- 6. Սորբ Վիլհելմոս՝ Փորթոկալի արեւմտեան եզերքը :
- 7. Թրոֆոլուր՝ Սպանիոյ հարաւային եզերքը :
- 8. Բորս՝ Գորսիքայի հիւսիսային եզերքը :
- 9. Թեւուրոս՝ Սարտենիա կղզւոյն հարաւային եզերքը :

- 10. Բասարոյ՝ Սիկիլիոյ հարաւային եզերքը :
- 11. Մթարբէլէնոյ՝ Իտալիոյ հարաւային եզերքը :
- 12. Մարթան՝ Մորէայի հարաւային եզերքը :
- 13. Էֆրոս՝ Եւրոպական Թուրքիոյ արեւելեան կողմը :
- Հ. Եւրոպայի գլխաւոր լեռնագոտիները ուրոնք են :
- Պ. Եւրոպայի գլխաւոր լեռնագոտիներն են
- 1. Սլանոքնաւան լեռնագոտին կամ Քէօլէն՝ Շուէտի և Նորուեկիոյ մէջտեղ :
- 2. Անգլիական լեռնագոտիները :
- Ա. Անվոն՝ Վալէսի մէջ :
- Բ. Շըլէոյ՝ Անգլիոյ և Սկոտլանդի մէջտեղ :
- 3. Պերէննան լեռնագոտին՝ Գաղիոյ և Սպանիոյ մէջտեղ :
- 4. Սլանիական կամ Իքեթեան լեռնագոտիները :
- Ա. Գանդաղբեան գոտին :
- Բ. Սլէրա Նեուրոս :
- Գ. Սլէրա Դիսարբելա :
- Դ. Սլէրա Դուսա կամ Դուլերոյի գոտին :
- Ե. Սլէրա Մորէնա :
- 5. Գաղիական լեռնագոտիք :
- Ա. Վոսթ :
- Բ. Սէվէն :
- Գ. Օվերնել :
- 6. Եորս լեռանց գոտին՝ Գաղիոյ և Զուրիցերայի մէջտեղ :
- 7. Ալպեան լեռնագոտին՝ մէկ կողմէն Գաղիոյ և Զուրիցերայի և միւս կողմէն Իտալիոյ մէջտեղ :
- Այս գոտւոյն կը վերաբերի Մուդլան, Եւրոպայի ամենէն բարձր լեռը :

- 8. Ադինինեան լեռնագոտին՝ Իտալիոյ մէջ:
- 9. Գաբորեան լեռնագոտին՝ Հունկարիոյ մէջ:
- 10. Պալանները՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ:
- 11. Տինարեան լեռնագոտին՝ Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան կողմը:
- 12. Հերէնայան լեռանց գոտին՝ Պէնդոս:
- 13. Ուրալ լեռանց գոտին՝ Րուսիոյ մէջ, Ասիոյ և Եւրոպիոյ մէջտեղը:
- 14. Կովկասեան լեռնագոտին որ Ասիա Եւրոպայէն կը բաժնէ:
- Հ. Եւրոպայի հրաբուխները որմնք են:
- Պ. Եւրոպայի հրաբուխներն են
- 1. Վեաու՝ Նաբոլիի մօտ:
- 2. Էթնա՝ Սիկիլիոյ մէջ:
- 3. Հեիա՝ Իզլանտի մէջ:



Ա. Հ Ա Ր Ա Ի Ա Յ Ի Ն Ե Ի Ր Ո Պ Ա

1. Յ Ո Ի Ն Ա Կ Ա Ն Յ Ա Մ Ա Ք Ա Կ Ղ Ջ Ի

(Տե՛ս էջ 14)

Դ Ա Ս Ժ Բ.

Հ. Յունական ցամաքակղզւոյն վրայ քնչ պատմական գիտելիք կայ:

Պ. Այս ցամաքակղզւոյն ամենէն հին բնակիչներն են Յոյնք որ գիտութեանց, արուեստից և քաղաքականութեան կողմանէ յիշատակ հին առեւտրական առաջին ազգը կը համարուին: Հռոմայեցիք քրիստոնէական թուականէն 146 տարի

առաջ նուաճեցին Յոյները, բայց Քրիստոսէ ետքը 391ին Հռոմայեցւոց տէրութիւնը երկուքի բաժնուելով՝ Արեւմտեան և Արեւելեան, Արեւելեանը եղաւ Յոյն կայսրութիւն մը որոյ մայրաքաղաքն էր Բիզանդիոն կամ Կոստանդնուպոլիս: Այս կայսրութեան վրայ յարձակեցան նախ Սլաւազգեր՝ Սերուիացիք, Պոսնացիք և Պուլլարք: Ապա միջին դարուց մէջ Խաչակիրք, այսինքն Երուսաղէմ աղատելու համար Եւրոպայէն արեւելք եկող զօրքերը, 1204-1261 Լատինական կայսրութիւն մը հաստատեցին Կոստանդնուպոլիս՝ Յոյն կայսրները Փոքր Ասիա վճռուելով: Անկէ քար մը ետքը Օսմանեան Թուրքերը Թաթարիստանէն գալով նուաճեցին Մակեդոնիա, Ալպանիա և Սերուիա: 1361ին Սուլթան Մուրատ Ա. Ադրիանուպոլիս մայրաքաղաք ըրաւ, և 1453ին մայիս 29 Սուլթան Մէհմէտ Բ. առաւ Կոստանդնուպոլիս Բալէոլոկոսեան ցեղէն Կոստանդին ԺԱ.ի ժամանակ: Այսպէս Յունական կայսրութիւնը եղաւ Օսմանեան կայսրութիւն:

Հ. Օսմանեանք քնչ ըրին:

Պ. Օսմանեանք բոլոր Եւրոպա գողացուցին: Սուլթան Սիւլէյման Բ. 1529ին մինչեւ Վիէնա գնաց: Ունկարիա, Մոլտաւիա, Վալաքիա, Քրիմէ նուաճուեցան: 1566էն ետքը Օսմանեան տէրութիւնը սկսաւ տկարանալ: 1683ին Օսմանեանք նորէն գացին մինչեւ Վիէնա, բայց ետ մղուեցան: Այնուհետեւ մինչեւ 1718 ստէպ պատերազմներ եղան Օսմանեանց և Աւստրիացւոց մէջտեղ որոնց օգնական էին Լեհացիք:

Օսմանեանց ամենէն մեծ թշնամին եղան

Րուսք Մեծէն Պետրոսէ ետքը : 1683ին Օսման-
ցիք կորուսին Քրիմէ, 1812ին՝ Պեստրապիա :
1821ին Յունաստան ապստամբելով Եւրոպացւոց
օգնութեամբ զատ տէրութիւն եղաւ Սուլթան
Մահմուտ Բ-ի ժամանակ, որ Եէնիչէրիները վեր-
ցնելով Եւրոպական կարգեր հաստատեց, և
հազիւ ազատեցաւ Եդիպտոսի կուսակալին Մէհ-
մէտ Ալի փաշայի յարձակումէն : Եւրոպացւոց
օգնութեամբ, 1853-1856, Րուսիոյ պատերազ-
մին առենը աւելի մեծ վտանգէ մը ազատեցաւ
Թուրքիա Գաղիոյ և Անգղիոյ օգնութեամբ :



Ա. Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ո Ի Ր Ք Ի Ա

(ԲԱՐՁՐԱՅՈՅՆ ԴՈՒՌԸ)

Գ Ա Ս Ժ Գ .

Հ. Եւրոպայի մասին մէջ Թուրքիոյ երկիրները
որոնք են :

Պ. Եւրոպայի մասին մէջ Թուրքիոյ երկիրներն
են :

1. Րուսի (Թրակիա) կամ Ադրիանուպոլսոյ
կուսակալութիւն (վիլայէթ) .

2. Պոնտոս կամ Դանուբի կուսակալութիւն .

3. Մակեդոնիա կամ Թեսաղոնիկէի կուսակա-
լութիւն .

4. Թեսալիա կամ Եաննայի կուսակալութիւն .

5. Ալպանիա կամ Մանասթըրի կուսակալութիւն .

6. Պոնտոս .

7. Կղզիք .

8. Երեւ Ինքնօրէն գաւառներ :

Հ. Րումէլիի երեւելի քաղաքները որոնք են :

Պ. Րումէլիի երեւելի քաղաքներն են

1. Կոստանդնուպոլիս, հնոց Բուզանդիոսը,
առանձին վիճակ է իւր շրջականերովը :

Հ. Կոստանդնուպոլսոյ վրայ ինչ զիտելիք կայ :

Պ. Կոստանդնուպոլիս Օսմանեան տէրութեան
մայրաքաղաքն է, ունի 1,000,000 բնակիչ որոնց

500,000ը Մահմետական է : Աշխարհիս ամենէն
մեծ վաճառաւազ քաղաքներուն մէկն է Սեւ ծո-

վուն բերանը, Եւրոպիոյ և Ասիոյ սահմանին
վրայ շինուած : Երկայն ջրանցքով մը որ ըստ Եւ-

րոպացւոց Ոսկեղջիւր (չօրն ա՛օր) կը կոչուի՝ եւ
կու բաժնուած է . բուն Կոստանդնուպոլիս կամ

Իսթամպուլ, և Ղալաթիա հանդերձ Բերայիւ :

Հին շէնքերուն մէջ երեւելի են Ա. Սուրբ Սոփիա
(Այասոփիա) եկեղեցին Յուստինիանոսէն մնա-

ցած, հիմա մզկիթ, Բ. վաճառանոցը (չարչին),
Գ. եօթն աշտարակները (Եէտի գուլէ), Դ. պին

պիւր տիրէք որ ջրոյ համբարանոց էր : Բերայէ
ետքը որ Եւրոպացւոց և դեսպանաց թաղն է՝

երեւելի է Ֆանար որոյ բնիկ Յոյն ընտանիքնե-
րուն շատը հին Բուզանդեան կայսրութեան ազ-

նուկաններէն են . ասոնցմէ կ'ընտրուէին Մու-
տովլաքիոյ հին Հոսքոտարները (Ուլահ պէյի) :

Կոստանդնուպոլսոյ զիմացը, Ասիոյ հողին վրայ
են Իսկէնդար և Բաղլէրան (Գատըքէոյ) :

2. Արդիանուպոլիս (Էտիրնէ) (120,000) Մա-
րիցա կամ Մէրիճ գետին քով :

3. Յիւլիպէ (30,000) :

4. Կելեդուր, զինուորական նաւահանգիստ և վաճառաշահ քաղաք (13,000):

5. Գլբրէ Կելե (12,000). ունի ընտիր կողմ և պանիր:

6. Իսկիս (20,000). տօնավաճառն անուանի է:

7. Էսի Զալար (10,000). ունի հանքային ջուրեր:

8. Տիֆրուս (8,000):

9. Ռոտուս (Թէքիրտաղ) (13,000), վաճառատեղի և նաւահանգիստ:

10. Սելեկէ (4,000). նաւահանգիստ:

11. Տարֆուկ (Չանագ գալէ), աւելի քան 800 թնդանօթովք ամրացեալ բերդեր ունի՝ համանուն նեղուցին բերանը:

Յիշուելու արժանի են նաեւ Էրէկէ, Չօրլու, Պուրկալ, Չախլաճ, Թախար Պալարճըք, Գրընիլք:



ԴԱՍ ԺԴ.

2. Պուլկարիոյ երեւելի քաղաքները որոնք են:

Պ. Պուլկարիոյ երեւելի քաղաքներն են

1. Սօֆիա (30,000) Պալգաններուն ստորոտը:

2. Շոմա (20,000), Պալգաններուն ստորոտը:

3. Նիկոպօլիս (16,000), Վիպի (20,000), Ռոսսոս (30,000), Սելեուքի (20,000) ամուր տեղեր են:

4. Վառնա (20,000) Սեւ ծովուն եզերքը: Երեւելի են նաեւ Դընիօվա՝ հին Պուլղար թագաւորութեան մայրաքաղաքը, Թուլա, Սելուք, Բուլ

լախ, Ինչուիլի, Ռոսսոս, Հըրըլա, Իսպահ, Պուլնք, Սուլիս, Սամսոն, Օսման փալար:

2. Մակեդոնիոյ երեւելի քաղաքները որոնք են:

Պ. Մակեդոնիոյ երեւելի քաղաքներն են

1. Թեսալոնիկ կամ Սելուքի (100,000). վաճառաշահ քաղաք է:

2. Սերէլ (30,000), 300 գեղերով:

3. Մանասիք (30,000):

4. Իսկիս (10,000), Ենիքէ, Վարդար:

5. Այնուր կամ Ալուս լեռը ուր կան 22 Յոյն վանք, 300 մատուռ, 3,000 աբեղայ:

Երեւելի են նաեւ Գալա ուր ծնաւ Եղիպտոսի Մէհմէտ Ալի փաշան, Օիլիս, Վալա:

2. Թեսալիոյ երեւելի քաղաքներն որոնք են:

Պ. Թեսալիոյ երեւելի քաղաքներն են

1. Լարիս կամ Ենիքէ (20,000): Լարիսայի մօտ է հին բանաստեղծութեան մէջ անուանի Տէմոքէ հովիտը և Ողիսոս լեռը:

2. Յարաւա, ըստ հնոց Փարսաղ ուր Գրիստոսէ առաջ 48ին երեւելի պատերազմ մը եղաւ Օգոստոս կայսեր և Հայոց Թշնամուոյն Անտոնիոսի մէջտեղ:

3. Գրընալա, Չալար, Արդա, Ալուս:

2. Ալպանիոյ երեւելի քաղաքներն որոնք են:

Պ. Ալպանիոյ (Արնաուտլուգ) երեւելի քաղաքներն են Շարդա (40,000), Ենիս կամ Եանե (40,000). հոս մեռաւ Թէփէտէլէնի Ալի փաշա 1822ին: Տարսուզ, Բըլբըն (40,000), Նիլ (20,000) ուր ծնաւ մեծն Կոստանդիանոս. Բըլբըն, Ատիս:

Հ. Պոսնայի երեւելի քաղաքները որոնք են :

Պ. Պոսնայի երեւելի քաղաքներն են

Պոսնայի (60,000), Դրասնէ (12,000), Չլոսնէ (10,000), Պանեւա (10,000), Բարիսիցա, Արշիւսի :

Պոսնա Թուրքիոյ համար կարեւոր տեղ մըն է իբրեւ լեռնային պարիսպ Աւստրիոյ դէմ :

1851էն ի վեր Պոսնայի կը վերաբերի Հերցոգինա, Թուրքիոյ Դաղմատիան, գլխաւոր քաղաքը Մոնթր (18,000), որ անուանի կամուրջ ունի քարաշէն :

Հ. Թուրքիոյ կղզիները որոնք են :

Պ. Թուրքիոյ կղզիներն են՝

1. Եգէական կամ Արշիպելագոսի կղզիները : Թասոս, Սամոթրակէ, Իմորոս և Լեմնոս ուր ժամանակաւ կար անուանի բաւիղ մը (լաբիւրինթոս) :

2. Կրետէ որ առանձին կուսակալութիւն է և ունի լեռնագօտի մը և Իոս լեռը : Քաղաքներն են՝ Գանդիա (15,000) և Գանէա (12,000) ընտիր նաւահանգստով, Բերքիոյ (6,000) :



ԴԱՍ ԺԵ.

Հ. Թուրքիոյ երեք ինքնօրէն եւրոպական գաւառներն որոնք են :

Պ. Թուրքիոյ երեք ինքնօրէն եւրոպական գաւառներն են՝

Ա. Սերիէ որ Ժ. դարէն մինչեւ ԺԵ. դար թագաւորութիւն էր : 1459ին Օսմանեանը նուա-

ձեցին Սերուիա : 1718ին Բասարովիցի դաշնադրութեամբ մեծաւ մասամբ Աւստրիացոց անցաւ այս երկիրը : 1739ին Պէլկրատի խաղաղութեամբ նորէն առին Օսմանցիք Սերուիա : Սերուիացիք 1801-1812 կուռեցան Օսմանեանց դէմ և 1815ին Սերուիա եղաւ ինքնօրէն իշխանութիւն : Բարձրագոյն Դուռը Սերուիայէն տարին 23,000 լիրա տուրք կ'առնէ, բայց Պէլկրատի բերդին մէջ պահապան զօրք ունենալու իրաւունքէն հրաժարեցաւ 1867ին :

Սերուիոյ բնակիչն է 1,250,000. Երեւելի քաղաքներն են Պէլկրատ Դանուբի եզերքը (30,000), Սեֆեարէ, Դալմատիցա (5,000) իշխանաւնիստ, Գլադա :

Բ. Մոլտովլաքիա (Ուլազ Պուղտան) : Մայրաքաղաքն է Պոտրէշ (142,000). Հոս կը նստի Մոլտովլաքիոյ իշխանը : Պուրրէշ ունի համալսարան : Ամուր քաղաքներ են Իդրոյէշ (26,000) Վալաքիոյ նաւահանգիստը, և Ճիւրճէշ : Երեւելի քաղաքներ են՝ նաեւ Եաշ (90,000), Կաւայ (36,000), Դանուբի եզերքը. Իսմայէլ (20,000) :

Հ. Մոլտովլաքիոյ վրայ դիտելու արժանի ինչ բան կայ :

Պ. Մոլտովլաքիա կը կոչուի նաեւ Բուժանիա : Ունի 4,500,000 բնակիչ, Բ. Դրան կուտայ տարին 600,000 լիրա :

Բուժանը ԺԳ. դարուն մէջ անկախ տէրութիւն եղան, ԺԶ. դարուն մէջ նուաճեցան Օսմանցիներէն : Բուժանիա առաջ երկու իշխանութիւն էր, Մոլտաւիա և Վալաքիա : 1802ին Բուսիա այս իշխանութեանց պաշտպան ըլլալու իրաւունքը

ստացաւ Բարձրագոյն Դռնէն : Իշխանները Կոստանդնուպոլսոյ Ֆէնէրի Հին Յոյն ընտանիքներէն էին : 1821ին Իփսիլանդի յոյն իշխանը ապստամբելով յաղթուելէն ետքը՝ իշխանութիւնը արուեցաւ բնիկ Պոյարներու որ նախ երեք տարուան համար կ'ընտրուէին , յետոյ ցկեանս եղան : 1858ին երկու իշխանութիւնները միացան Բարձրագոյն Դրան հաճութեամբ ըստ խրատու եւրոպական տէրութեանց , և Քուզա իշխանը՝ Աղեքսանդր Յովհաննէս Ա. անուամբ եղաւ իշխան Մոլտովալաքիոյ , բայց 1863ին հրաժարեցաւ , 1866ին ժողովուրդն ընտրեց Գերմանիոյ Հոհէնցոլլէոնի ազգատոհմէն Կարոլս իշխանը իբրեւ ժառանգական իշխան Բումանիոյ :

Հ. Եւրոպական Թուրքիոյ մէջ ուրիշ ինչ իշխանութիւն կայ :

Պ. Եւրոպական Թուրքիոյ կը վերաբերի նաեւ Չեռնոգորա կամ Մոնթէնէգրոյ (Գարաաաղ) 200,000 բնակչօք : 1861էն 'ի վեր Մոնթէնէկրոյ մտաւ Բարձրագոյն Դրան իշխանութեանը ներքեւ : Գըլխաւոր քաղաքն է Չեթինէ : Մոնթէնէկրոցիք Սլաւ ցեղէն են , յունադաւան , պատերազմող : Պլատիբան , այսինքն իշխանը , աշխարհական իշխան միանգամայն Եպիսկոպոս է . ունի ձերբակոյտ մը :

Հ. Եւրոպական Թուրքիոյ բնակիչները ո՞րչափ են :

Պ. Եւրոպական Թուրքիոյ բնակչաց թիւն է 17 1/2 միլիոն : 6 միլիոնը յունադաւան Սլաւ է , այսինքն , Սերուիացի , Մոնթէնէկրոցի , Պոսնացի և Պուլլար :

| | | |
|---------|--------|--------------------------|
| 4 1/2 | միլիոն | Բոսնի (Ուլաշ) : |
| 4 1/2 | « | Ալպանիացի (Առնաւուա) : |
| 4 1/2 | « | Օսմանցի : |
| 1 | « | Յոյն : |
| 400,000 | | Հայ : |
| 70,000 | | Հրեայ : |
| 214,000 | | Գնչու (Չինկաւի) : |

Հ. Թուրքիա ինչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Թուրքիա սահմանադրական Միապետութիւն է : Սուլթանը աշխարհային և հոգեւոր բացարձակ զուլի է : Տէրութեան բարձր պաշտօնատարներն են 1. Եպարքոսը կամ մեծ Վէզիրը (Սատրաղամ) որ զորձադիր իշխանութեան կամ վարչութեան զուլին է , որուն իշխանութեանը ներքեւ են ուրիշ պաշտօնեայք . 2. Դենպետը կամ Շէյխ իւլ Իսլամը (Իսլամին ձերը) որ զուլի է Իւլէմայից որ Մահմետական կրօնքին քահանաները և դատաւորներն են : Շէյխ իւլ Իսլամ Մահմետական օրէնքին մեկնիչն է : Վարչութեան ամէն պաշտօնարաններուն և դաւառաց ու քաղաքաց խորհուրդներուն մէջ Միւֆթի կոչուած օրէնագէտներ կը նստին : 3. Միւս պաշտօնեայք որ են Պատերազմի , Մովային զօրութեան , Արտաքին գործոց , Ելեւմտից , Արդարութեան , Առեւտրական գործոց , Հասարակաց շինութեան , Հասարակաց կրթութեան և Անշարժ ստացուածոց պաշտօնեաները :

Հ. Թուրքիոյ զինուորական զօրութիւնը ո՞րչափ է :

Պ. Թուրքիոյ ցամաքային զօրքը 210 հազար է . պատերազմի ատեն կրնայ 700 հազար ըլլալ :

Նաւատորմիցը կը բաղկանայ 103 շոգենաւէ ու
բոնց 19ը զրահաւոր է, և 73 առաջատաւոր
նաւէ :



Բ. ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԴԱՍ ԺԶ.

Հ. Յունաստանի բնակիչը և զօրքը հըրչափ է :
Պ. Յունաստանի բնակիչը՝ 1,500,000, զօրքը՝
50,000, նաւատորմիցը 38 նաւ, 3ը զրահաւոր :
Այս փոքր թագաւորութիւնը քանի մը տարի է
ի վեր մեծ յառաջադիմութիւն կ'ընէ : Վաճառա-
կանութիւնը, արուեստները, զինուորական զրու-
թիւնը և դաստիարակութիւնը օր քան զօր կը ծաղ-
կին և կը զարգանան :

Հ. Յունաստանի երեւելի քաղաքները որոնք
են :

- Պ. Յունաստանի երեւելի քաղաքներն են
- 1. Աթէնս, մայրաքաղաք (41,000), ունի հա-
մալսարան մը : Նաւահանդիստն է Բէրէ (10,000) :
- 2. Լէքանիոյ, Սալոնիկ, Միսսուրանի, Կորնթոս,
Նաֆփոս (11,000), Բարբոս (18,000), վաճառա-
շահ քաղաք :
- 3. Նաուսիոն, նաւահանգիստ է. Հոս այրեցաւ
Օսմանեան նաւատորմիցը 1827ին :
- 4. Միսիսիոս, Հին Սպարտայի աւերակներուն
մօտ :
- 5. Միսիսիոն, բերդաքաղաք, Միսիթարեանց Հիմ-
նադիրը, Միսիթար, Հոս վանք մը հաստատեց :

6. Էլեէթոյ (Էյրիպոզ) կամ Նեկրօֆոնտէ Յու-
նաստանի ամենէն մեծ կղզին է :

7. Կիկլատեան կղզիք՝ Նաուսոս, Պարոս՝ մարմա-
րիոնն անուանի, Սալոսիոն հրաբուխ օր վերջին
անգամ բորբոքեցաւ 1866ին :

8. Յոնիական եօթն կղզիք որոց գլխաւորն է
Քորֆոս համանուն քաղաքով (25,000) : Տես և
էջ 21 :



2. ԻՏԱԼԱԿԱՆ ՅԱՄԱԲԱԿՂԶԻ

ԴԱՍ ԺԷ.

Հ. Իտալիոյ վրայ ինչ պատմական տեղեկու-
թիւն կայ :

Պ. Այս երկիրը քանի մը տարի առաջ կը բաղ-
կանար Սարտենիոյ, Նաբոլիի, Լոմպարտիոյ ու
Վենետիկոյ թագաւորութիւններէն, Պապին երկ-
րէն և ուրիշ քանի մը դքսութիւններէ : 1859ին
Աւստրիոյ դէմ պատերազմէն ետքը, բաց 'ի Վե-
նետիկոյ և Պապին երկիրներուն մէկ մասէն, բո-
լոր Իտալիա միացաւ Սարտենիոյ հետ, և կոչ-
ուեցաւ « Իտալիոյ թագաւորութիւն » : 1866ին
Բրուսոյ-Աւստրիական պատերազմին ատենը Իտա-
լիոյ հետ միացաւ նաեւ Վենետիկ օր Աւստրիոյ
կը վերաբերէր. վերջապէս 1870ին Ֆրանզոյ-Գեր-
մանական պատերազմին ատենը Հռոմ առնուե-
լով Պապին աշխարհական իշխանութիւնը ջնջուե-
ցաւ և բոլոր Իտալիա եղաւ մէկ թագաւորութիւն :

Հ. Իտալիոյ բնակիչը և զօրքը հըրչափ է :

9. Խտալիոյ բնակիչը 26 1/2 միլիոն է, զօրքը 377,000, բայց կրնայ 574,000 զօրք հանել. նաւատորմիդն է 91 նաւ, 22ը զրահաւոր, 788 թնդանօթովք:

Հ. Խտալիոյ երեւելի քաղաքները որմնք են:

Պ. Խտալիոյ երեւելի քաղաքներն են

1. Հոմ, 1871էն ՚ի վեր մայրաքաղաք(224,000) Տիբեր գետին քով 7 բլուրներու վրայ շինուած: Հին Հռոմայեցւոյ ժամանակէն մնացած երեւելի շէնքերն են Բանթէոնը (ամենադից մեհեան) որ հիմա եկեղեցի է, Տրայանոսի սիւնը, Քոլոսէոնը (Ամփիթէատրոն 100,000 հոգւոյ համար), Տիտոսի, Սեպտիմոս Սեւերոսի և Կոստանդիանոսի յաղթական կամարները:

Ուրիշ երեւելի շէնքերն են Սուրբ Պետրոսի եկեղեցին, Հռոմի 400 եկեղեցիներուն, նաեւ բոլոր աշխարհի եկեղեցիներուն ամենէն մեծը, զոր Յուլիոս Բ. Պապ սկսաւ շինել 1506ին, Սիքստոս Է.ի ժամանակ 1590ին գմբէթը լմնցաւ և 1626ին օծուեցաւ. վատիկանու պալատը ուր Պապը կը նստի, որ և ունի քանի մը հազար սենեակ, շատ անուանի գրատուն մը և թանգարան մը. Լատերանու եկեղեցին որ Պապին մայր եկեղեցին է:

Գրեթէ ամբողջ Հռոմ քաղաքը գեղարուեստից թանգարան է, երեւելի նկարչաց և անդրիագործաց հուշակաւոր գործերովն հարուստ: Հռոմի մօտ է նաեւ Քաթազոմպ կոչուած ստորերկրեայ գերեզմանատունը ուր նախնի Քրիստոնեայք հաւածանաց ժամանակ կ'ապաւինէին: Չէֆթու վէտու (10,000) բերդաքաղաք և նաւահանգիստ:

2. Թուրին, Բոյ գետին վրայ, (200,000) . ունի համալսարան և երեւելի թանգարաններ, մանաւանդ Եւրոպական Հնութեանց թանգարանը:

3. Միլան (200,000): Նշանաւոր է մայր եկեղեցին Ղուրսէն 4,500 անդրիներով (արձաններով) շարդարուած. Սուրբ Ամբրոսիոս կոչուած եկեղեցին ուր Գերմանիոյ կայսերը Խտալիոյ թագաւորութեան «երկաթի թագով» կը պսակուէին: Յշեւելի է նաեւ Սքալա կոչուած թատրոնը:

4. Բաֆա (30,000), Քրեմանա (30,000), Պերչեայ (25,000), Սոլֆերինոյ, Գոմոյ (12,000):

5. Վենեթի (120,000), Ալքիական ծովուն մէջ շինուած: Երեւելի են Տոսկերուն պալատները և Սուրբ Մարկոսի եկեղեցին, նաւարանը և թընդանօթի ձուլարանը: Վենետիկ կէս դար առաջ հանրապետութիւն էր, որոյ նախագահը կը կոչուէր Տոժ: Վենետիոյ քով մանր կղզիներէն մէկն է Ս. Ղազար, ուր է Մխիթարեանց վանքը որ ունի երեւելի տպարան և գրատուն մը հարուստ Հայերէն ձեռագրօք:

6. Քիւզեն (27,000), Մանդուա (28,000), Վերոնա (36,000) և Պիզէն (40,000), այս վերջին երեքը ամուր բերդեր են. Բարոնա (52,000), Երեւելի է Սրբոյն Անտոնի պատուացւոյն եկեղեցին, Վիչենցա (35,000), Ուոլտեր (24,000) և Թրեւիչ: (22,000):

7. Ճէնովա, ծովեզերեայ քաղաք (130,000): Կոստանդնուպոլսէն և Նաբոլիէն ետքը երրորդ է գեղեցիկ զրիցը կողմանէ: Ճէնովա մինչեւ 1797 հանրապետութիւն էր, վաճառականութեամբ անուանի, մանաւանդ Սեւ ծովուն մէջ:

1416

8. Բարձա (30,000) . առուտուրը մետաքս և պանիր : Բէլաշնոց (30,000) :

9. Մարենա (30,000) :

10. Պալանեա (100,000) , համալսարան ունի . Յերբարա (20,000) , Բալանա (70,000) , Յայնոցա (20,000) , յախճապակին ընտիր :

11. Ֆերեշոց (115,000) , Իտալիոյ Աթէնքը , գեղեցիկ շինուածներով և թանգարաններով երեւելի է : Լիվաշոյ (95,000) ուր Հայոց եկեղեցի կայ (Հռոմէական Հայոց ձեռքը) , ծովեզերեայ քաղաք է : Բէշա (50,000) անուանի է Բիշայի աշտարակը 168 ոտք բարձր : Սէնա (20,000) : Լաֆշա (20,000) :

12. Անգոնա (30,000) , բերդաքաղաք : Լորեդոյ , հոս կը ցուցուի Աստուածածնի տունը , որ երեւելի ուխտատեղի է : Բերոնճէա (15,000) :

13. Նաբոլի (450,000) , անհամեմատ գեղեցիկ զիրքով , այնպէս որ Իտալացոց մէջ առակ է « Վէտի Նաբոլի , բոյի մուօրի » , տես Նաբոլի , և ապա մեռիր : Երեւելի է Պուրպոնեան թանգարանը հարուստ զրատամբ և հին տանը Քրիստոսէ 79 տարի առաջ հրաբուխէ ծածկուած ու մօտատեններս գտնուած Հերքուլանոս և Բոմբէլի քաղաքներուն հնութիւններովը : Կոյեդա , բերդաքաղաք : Ագոնիլա , Տարեդոն և Կադուա շատ հին քաղաքներ են : Պրիւորիլի , Բէճճիոյ , Սալեաշոյ նշանաւոր են :

14. Սարաէնեա կղզին 600,000 բնակչօք . ծովեզերքը լի է բուստով (մէրճան) . գլխաւոր քաղաքն է Քալեարի (28,000) :

15. Էլպա կղզին :

16. Սիկիլիա կղզին բնակիչ 2 1/2 միլիոն , շատ ծծումբ ունի : Քաղաքներն են՝ Բալեարոյ (200,000) . ունի համալսարան և դիտարան : Մապիա (100,000) : Հոս մօտ են Լիբարեան կղզիք :

17. Սան Մարինոյ , հանրապետութիւն է 469էն 'ի վեր . բնակիչը 7,000 :

18. Մալթա , բնակիչը 150,000 : 1800էն 'ի վեր կը վերաբերի Անգլիացոց , որ ծաղկեցուցին կղզին , 'ի բնէ անպտուղ : Գլխաւոր քաղաքն է Լա Վալետ (60,000) . ամուր բերդաքաղաք է :



3. ԻՅԵՐԵԱՆ ԿԱՄ ՍՊԱՆԻԱԿԱՆ ՑԱՄԱԲԱԿՂՁԻ

Ա. Ս Պ Ա Ն Ի Ա

Դ Ա Ս Ժ Ը .

Հ. Սպանիոյ վրայ ինչ պատմական գիտելիք կայ :

Պ. Սպանիոյ հին և բնիկ ժողովուրդն էին Իբերացիք և Կելտք : Փիւնիկեցիք և Յոյնք Սպանիոյ հարաւային եզերքը գաղթականներ ունէին : Քրիստոսէ առաջ նախ Կարթեղոնացիք և ապա Հռոմայեցիք այս երկրին տիրեցին : Հռոմայեցոց արեւմտեան կայսրութեան կործանելէն ետքը եկան հոն Ալանք , Վանտալք և ապա արեւմտեան Գոթացիք , և թաղաւորութիւն հաստատեցին : 711ին Արաբացիք գալով Մահմետական թագաւոր

ւորութիւն մը հաստատեցին, բայց փախուցեալ բրիտանացիները կամաց կամաց զօրանալով վերջ տեցին Արաբացիները, և հաստատուեցան քանի մը թագաւորութիւններ, ինչպէս Արակոն, Նաւարրա, Լէոն, Գասթիլիա և 1100ին Բորթոկալ: Այս թագաւորութիւնները ժ.Յ. դարուն վերջը (1492ին) միացան Գասթիլիոյ ժառանգին Իզապէլի և Արակոնի ժառանգին Ֆէրտինանտի ամուսնութեամբ: Այնուհետեւ Սպանիա եւրոպայի առաջին և ամենէն հզօր և հարուստ թագաւորութիւնը եղաւ, բայց երթալով տկարացաւ: 1714ին Պուրպոնեան ցեղը տիրեց, բայց 1868ին Իզապէլլա Բ. Պուրպոնեան վանուեցով, 1870ին Իտալիոյ թագաւորին որդին Ամատէոս ընտրուեցաւ թագաւոր: 1873ին Ամատէոս հրաժարեցաւ, և հանրապետութիւնը հրատարակեցաւ Սպանիոյ մէջ: Սպանիա հիմա սահմանադրական թագաւորութիւն է:

- Հ. Սպանիոյ բնակիչը և զօրքը ճրջափ է:
- Պ. Սպանիոյ բնակիչն է 17,000,000 հոգով աւան կաթոլիկ, զօրքը 216,000, նաւատորմը 124 շոգենաւ, 10 զրահաւոր, 3ը առադաստաւոր, 846 թնդանօթովք:
- Հ. Սպանիոյ երեւելի քաղաքները որոնք են:
- Պ. Սպանիոյ երեւելի քաղաքներն են՝
- 1. Մարթի մայրաքաղաք (480,000) . ունի պալատներ, դեղեցիկ շէնքեր, համալսարան մը և թանգարան: Թոլէոյ (19,000), եպիսկոպոսանիստ քաղաք:
- 2. Պորթօ (22,000), բերդաքաղաք:
- 3. Գոթորօ (57,000): Սեւիլլա (152,000): Գո-

- թիւ (72,000), զինուորական նաւահանգիստ: Շէրէշ (52,000): Ճիւրաբար որուն ամրոցը 1704էն 'ի վեր Անգլիացուց ձեռքն է:
- 4. Կրանոթ (100,000): Հոս են Արաբացի իշխանաց պալատին Ալհամպրայի աւերակները: Մալչա (110,000), երեւելի է գինին:
- 5. Մարթի (30,000) և Գարթալէնա (22,000):
- 6. Վալենցի (145,000), մետաքսի գործարաններ ունի. Ալիքալէ (31,000), գինին անուանի:
- 7. Պարթէնա (250,000), բերդաքաղաք և զինուորական նաւահանգիստ:
- 8. Սարաչոս (82,000), 1808ին և 1809ին քաջութեամբ դիմացաւ Գաղիացուց:
- 9. Բարթէնա (25,000), ամուր քաղաք:
- 10. Սան Եռնոյ (Ս. Յակոբ) ո՛ր Գոթորոգիլլա (27,000) հոս կը ցուցուի Յակոբոս առաքելոյն դեղմանը և երեւելի ուխտատեղի է: Գորոննա (30,000): Ֆերրոլ (21,000), ամուր քաղաք է Ագլանդեան ովկիանոսի վրայ: Հոս է նաւարանը:
- 11. Սանտանդեր (35,000), Պորթո (25,000), Սեյնթիա . հոս մօտ է Փիլիպպոս Բ. էն շինուած Էռթորիլ անուն երեւելի շէնքը՝ վանք, եկեղեցի, գրատուն և դերեղմանատեղի թագաւորաց:
- 12. Վալադոլիդ (40,000), Լէոն, Սալամանքա (14,000), անուանի համալսարանով: Ալմարէն . երեւելի է սնդկի հանքը:
- Հ. Սպանիոյ կղզիները որոնք են:
- Պ. Սպանիոյ կղզիներն են .
- 1. Պալէարեան կղզիք՝ Մայորքա, գլխաւոր քաղաքը Բալմա (40,000) . Մինորքա, գլխաւոր քաղաքը Մահոն, Միջերկրական ծովուն մէջ:

2. Գանաբեան կղզիք և Կոսթնէայի կղզիներն՝ Ափրիկէի մէջ, 300,000 բնակչօք :


3. Անրէլեան մեծ կղզիները Գոալա և Բորնոյ Րէտոյ՝ Ամերիկայի մէջ, 2,000,000 բնակչօք :

4. Փէլիպեան կղզիք՝ Ասիոյ մէջ :

5. Մաքէանեան կամ Աւալակոյ կղզիք, Գարուլեան կղզիք և Բէլե- կոչուած կղզիք՝ Աւստրալիոյ մէջ :

Հ. Անտորա բնչ է :

Պ. Անտորա փոքր Հանրապետութիւն է Պիւսեան լեռանց մէջ, բնակիչը 2,000 :



Բ. ԼՈՒՍԻՏԱՆԻԱ ԿԱՄ ԲՈՐԹՈՒԿԱԼ

ԴԱՍ ԺԹ.

Հ. Բորթոկալի վրայ բնչ պատմական զիտելիք կայ :

Պ. ԺԹ. Դարուն մէջ Գասզիլիոյ թագաւորը Ալֆոնս 2. այս երկիրը տուաւ Պուրկունտցի Հենրիկոս իշխանին : Պուրկունտի տունը տիրեց մինչեւ 1580 :

Այս փոքր տէրութիւնը երեւելի եղաւ ԺԴ դարէն ետքը Եւրոպայէ դուրս շատ տեղերու տիրելով : Վասզոյ տէ կամա նաւապետը գտաւ Արեւելեան Հնդկաստանի ճամբան 1498ին . Պրազիլեա գտնուեցաւ 1500ին : 1580էն ետքը Բորթոկալ կորսնցուց դուրսի երկիրները, և նուաճուեցաւ Սպանիայէն : 1640ին նորէն գտաւ իր

ազատութիւնը, ունենալով թագաւոր Պրականցայի տունէն . մինչեւ ցարդ Բորթոկալի թագաւորը այս տունէն են : Բորթոկալի փառաւոր ժամանակը երգած է Գամոնէնս բանաստեղծն իր Լուսիական անդէն զիւցարչնականին մէջ :

Հ. Բորթոկալի բնակիչը և զօրքը սրչափ է :

Պ. Բորթոկալի բնակիչը 4,347,000 է, զօրքը 70,000, նաւատորմիչը 42 նաւ 366 թնդանօթով :

Հ. Բորթոկալի գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Բորթոկալի գլխաւոր քաղաքներն են

1. Լիսպոն (224,000), մայրաքաղաք :

2. Գոլիստա (18,000), ունի Համալսարան : Եւրա (12,000) :

3. Պրականցա, բերդաքաղաք : Այժմու Բորթոկալի թագաւորը այս քաղքին Հին դուքսերուն ցեղէն են :

4. Օքորոյ (90,000), ունի մետաքսի գործարաններ և ընտիր գինի :

Հ. Բորթոկալի կղզիները որոնք են :

Պ. Բորթոկալի կղզիներն են .

Հոս կը նստի Հռովմէական Կաթողիկէ Եպիսկոպոս մը :

3. Քանտոն (1,250,000) , վաճառաշահ քաղաք :

4. Շանհէ (400,000) , Ասյ (300,000) ,
Ֆեւ-չեւ (600,000) :

5. Լհասս , կրօնատեղի Թիպէթի մէջ :

Հ. Չին ինչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Չինու կառավարութիւնը բացարձակ միա-
պետական է : Ըստ Կոմիտեկիոսի (500ին նախ
քան զիք .) երկիրը կը վարէ Չինու տէրութեան
մեծամեծ շարժումները , և ան է երկրին ճշմա-
րիտ և միմիայն տէրը : Կայսրը որ Չինաց լեզ-
ուաւ թիւն թի , երկնից որդի , և Հանի դի , բարձ-
բագոյն իշխան կը կոչուի , տէրութեան հայրն ու
մայրն է , և բացարձակ իշխան : Այժմու տիրող
ցեղը Մանչու թաթարներէն է :



2. ՃԱՐՈՆ

ԴԱՍ ԽԴ.

Հ. Ճարոն ինչ երկիր է , բնակիչը սըչափ է :
Պ. Ճարոն Չինու արեւելեան հարաւային կողմը
խաղաղական Ուլկիանոսի մէջ մեծ և փոքր կըղ-
զիներէ բաղկացեալ տէրութիւն է , բնակիչը
20 միլիոն :
Հ. Ճարոնի գլխաւոր կղզիները և քաղաքները
որոնք են :

Պ. Ճարոնի գլխաւոր կղզիներն են՝ Նէֆոն, Բին-Սին, Սէտտ և Ելլոյ :

Գլխաւոր քաղաքներն են՝ Երոյ (1,500,000) այս քաղաքն առաջ Ճարոնի աշխարհական իշխանին նիստն էր, հիմա երկրորդ մայրաքաղաք է : Մեթոյ կամ Բեթոյ (500,000) այժմու մայրաքաղաքն է : Օլլոտ (400,000), վաճառաշահ ծովեզերեայ քաղաք է, մօտ ատեններս բացուեցաւ Եւրոպացուց :

Հ. Ճարոն քնչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Ճարոն բացարձակ միապետութիւն է, և գերագոյն իշխանութիւնը Մէթոյ կոչուած իշխանին ձեռքն է : Մէթոյն առաջ երկրին հոգեւոր գլուխն էր միայն, աշխարհական իշխանը զատ էր և Դալթոն կը կոչուէր : Վերջին ատեններս Միգատոն, կրօնական գլուխը, երկու իշխանութիւնը միացուց, և աշխարհական իշխանը քաշուեցաւ Եզոյ կղզին : Հիմա Ճարոնի կառավարութիւնը կը ջանայ այն երկրին մէջ Եւրոպական կրթութիւն տարածել : Մօտերս շատ երիտասարդներ կառավարութեան ծախքով Ամերիկա և Եւրոպա ղրկուեցան ուսում և զիտութիւն սորվելու :



Ա Փ Ր Ի Կ Է

ԴԱՍ ԽԵ

Հ. Ափրիկէ որ կիսագունտին վրայ է, որոնք են անոր սահմանները, և բնակչաց թիւը որչափ է :

Պ. Ափրիկէ հին ցամաքը պարունակող կիսագունտին հարաւային արեւմտեան կողմն է : Սահմաններն են հիւսիսէն՝ Միջերկրական ծովը, արեւմուտքէն՝ Ազլանդեան Ովկիանոսը, հարաւէն՝ Հարաւային Ովկիանոսը, արեւելքէն՝ Կարմիր ծովը և Հնդկաց Ովկիանոսը, բնակչաց թիւն է 120 միլիոն :

Հ. Ափրիկէ քանի մաս կը բաժնուի :

Պ. Ափրիկէ կը բաժնուի Ա. Հիւսիսային Ափրիկէ և Բ. Հարաւային Ափրիկէ :

Հ. Հիւսիսային Ափրիկէ քնչ երկիրներ կը պարունակէ :

Պ. Հիւսիսային Ափրիկէ կը պարունակէ 1. Եթիպոս, 2. Նոբէիա, 3. Հալեշ, 4. Պերդերիստան, 5. Սահարա, 6. Սենեկադիա, 7. Սոմալի :

Հ. Հարաւային Ափրիկէ քնչ երկիրներ կը պարունակէ :

Պ. Հարաւային Ափրիկէ կը պարունակէ 1. Արեւելեան ծովեզրը, 2. Բաբ կամ Բարեյոսոյ երկիրը, 3. Արեւմտեան ծովեզրը կամ Կոնգո, 4. Կալէտ :

Հ. Ափրիկէի ծովերը որոնք են :

Պ. Ափրիկէի ծովերն են՝ Միջերկրական, Արեւմտեան Ովկիանոսը, Մեծ Ովկիանոսը և Հնդկաց ծովը :

Հ. Ափրիկէի ծոցերը որոնք են :

Պ. Ափրիկէի ծոցերն են՝ Կոնգոյ ծոցը՝ Արեւմտեան Ովկիանոսի մէջ, Արեւելոյ ծոցը կամ

Կարծիք ծովը՝ Հնդկաց ծովուն մէջ, Սերբ և Քապես՝ Միջերկրականին մէջ :

Հ. Ափրիկէի հրուանդանները որոնք են :

Պ. Ափրիկէի Հրուանդաններն են՝ Գլա-ի Պան և Սե-րա՝ Պէրպէրիտանի եզերքը, Գլա-ի Սոլի-թոմի՝ Սահարայի եզերքը, Կանանդ Գլա-ի՝ Սենեկամպիոյ եզերքը, Բալ-ու և Լոբէզ՝ Կուինէայի եզերքը, Գլա-ի Քարեյոսոյ և Տէլիսոյ՝ Մոզամպիբի հիւսիսային եզերքը, Կոստրա-Ֆոնի՝ Սոմալի եզերքը, Նարալ՝ Մատակասարի հիւսիսային եզերքը :

Հ. Ափրիկէի լեռները որոնք են :

Պ. Ափրիկէի լեռներն են՝

Արլա՝ Պէրպէրիտանի մէջ. Քանի՛ Կուինէայի մէջ. Լոսանոյ լեռները՝ Հապէշի մէջ. Լոսթորա գօտին՝ Ափրիկէի հարաւային կողմը, և Մարախոս-տարի գօտին :

Հ. Ափրիկէի լիճերը որոնք են :

Պ. Ափրիկէի լիճերն են, Չոթ՝ Սուտանի մէջ, Տէմպես՝ Հապէշի մէջ, Նեանդա՝ հասարակածին տակ :

Հ. Ափրիկէի գետերը որոնք են :

Պ. Ափրիկէի գետերն են՝ Նեղոս որ կը թափի Միջերկրականը, Սենեկալ, Կոմոէս, Նիլեր, Չոյիբե, Օբանի որ կը թափին Աղլանդեան Ովկիանոսը, Չաֆէզ՝ Հնդկաց ծովը :



ԳԱՍ ԽԶ.

Ա. ՀԻՍՒՍԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

1. Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Հ. Եգիպտոսի բնակիչը որչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Եգիպտոսի բնակիչը 4 1/2 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

1. Ալեքսանդրիա (40,000), Երոպական ոճով շինուած, Երեւելի նաւահանգիստ է :

2. Բորբ Սիթ (10,000), Սուէշ (15,000), Տաֆէթ (60,000) :

3. Քահիրէ (313,000). Կոստանդնուպոլսէն ետքը Թուրքիոյ մեծագոյն քաղաքն է. ունի 400 մշակիթ (ճամբի), 30 եկեղեցի, 1,300 վաճառատեղի : Երկաթուղւոյ կապուած է Աղեքսանդրիոյ և Սուէշի հետ, առուտուրը ծաղկած : Գահիրէի մօտ են հին Եգիպտոսի Մեմփիս քաղքին աւերակները, և Բեբելոս կոչուած բրգունք :

Հ. Եգիպտոս ինչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Եգիպտոս ազատ կառավարութիւն է արդէ եւրոպական սկզբանց համեմատ : Իշխանը որ առաջ Փոթարոս կը կոչուէր, և հիմա Սուլթան կ'անուանուի՝ Եգիպտոսի անուանի Կուսակալին Մէհմէտ Ալիի ցեղէն է, հարկատու Բարձրագոյն դրան : Եգիպտոս, ի բնէ արգասաւոր, Մէհմէտալեան ցեղին անցնելէն ի վեր շատ ծաղկած է :

2. ՆՈՒՅԻԱ

Հ. Նուբիոյ բնակիչը հրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Նուբիոյ բնակիչը 3 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են

Պերպէր (8,000), Խարթում (45,000):

Նուբիա հիմա Եգիպտոսի կը վերաբերի:

3. ՀԱՊԵՇ կամ Եթովպիա

Հ. Հապէշի բնակիչը հրչափ է, գլխաւոր քաղաքը որն է:

Պ. Հապէշի բնակիչը 3 միլիոն է, գլխաւոր քաղաքն է Կոֆոր (40,000): Անգղիացիք 1868ին այս երկրին քրիստոնեայ թագաւորին թէոգորոսի վրայ յարձակեցան քանի մը Անգղիացի բանտարկեալներ ազատելու համար:

Հիմա Հապէշ քանի մը ինքնազուլի իշխանութիւններու բաժնուած է:



ԴԱՍ ԽԷ.

4. ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ

Հ. Պերպէրիտան Ափրիկէի որ կողմն է և քանի տէրութիւն կը պարունակէ:

Պ. Պերպէրիտան կը կոչուի Ափրիկէի հիւսիսային եզերքը՝ Եգիպտոսի արեւմտեան սահմանէն մինչեւ Աղլանդեան Ովկիանոս, և կը պարունակէ չորս տէրութիւն Ս. Թրէբոն կամ Թարսուս, Բ. Թունուզ, Գ. Ալճերէ և Դ. Մարտոյ:

Ա. ԹՐԻՒՐՈՒԻ

Հ. Թրիբուլի բնակիչը հրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Թրիբուլի բնակիչը 750,000 է, գլխաւոր քաղաքներն են

Թարսուզ (30,000), Մարզուս (11,000), Պէնդու: Թրիբուլի առանձին փաշայութիւն է, ժողովուրդը Մահմետական:

Բ. ԹՈՒՆՈՒԻ

Հ. Թունուզի բնակիչը հրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Թունուզի բնակիչը 1 1/2 միլիոն է. գլխաւոր քաղաքն է Թունուզ (115,000), Բապէ (25,000): Թունուզ Օսմանեան տէրութեան հպատակ է, փաշայի մը կառավարութեան ներքեւ:

Գ. ԱԼՃԵՐԻ

Հ. Ալճերի բնակիչը հրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Ալճերի բնակիչը 3 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են

Ալճերէ (53,000), Բունիս (35,000), Պան, Օբու (34,000):

Ալճերի 1830էն 'ի վեր Գաղիոյ կը վերաբերի:

Դ. ՄԱՐՔԵՐՈՒ

Հ. Մարքերոյ բնակիչը հրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Մարքերոյ բնակիչը 2,750,000 է, գլխաւոր քաղաքներն են

Յե. (100,000), Մարտի (50,000), Թանկեր, Միջոց (120,000):

Մարտի իշխանը կը կոչուի Սուլթան, ժողովուրդը մահմետական է:

5. Ս Ա Ղ Ո Ր Ա. (անսլաւո)

Հ. Սահարա Ափրիկէի հը կողմն է, բնակիչը հըրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Սահարա Պէրդէրիստանի հարաւային կողմն է, բնակիչը Յ միլիոն, գլխաւոր քաղաքն է Թե-դա: Ժողովուրդը վայրենի է:

6. Ս Ե Ն Ե Կ Ա Մ Պ Ի Ա

Հ. Սենեկամպիոյ բնակիչը հըրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Սենեկամպիա Ափրիկէի արեւմտեան եզերքն է. բնակիչը 12 միլիոն, գլխաւոր քաղաքն է Դիոն:

Աս երկրին ժողովուրդը վայրենի է. քանի մը տեղերը Եւրոպացւոց կը վերաբերին:

7. Ս Ո Ւ Տ Ա Ն

Հ. Սուտան հըր է, բնակիչը հըրչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Սուտան որ Նիկիտիա (Սեւաստան) ալ կըսուի՝ Սահարայի արեւելեան հարաւային կողմն է, բնակիչը 20 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Սեյ- (30,000), Դիոն- (13,000), Մոտ- (20,000), Թան, (36,000), Պոն, Տարֆ:

Ասոնք այլեւայլ ինքնազուլս ցեղերու քաղաքներ են, ժողովուրդը սեւամորթ վայրենի:



Բ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

1. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՈՎԵՂ

ԴԱՍ ԽԸ.

Հ. Արեւելեան ծովեզր ըսելով Ափրիկէի հը մասը կը հասկցուի:

Պ. Արեւելեան ծովեզր ըսելով կը հասկցուի Ափրիկէի այն մասը որ Ատենի ծովածոցէն կամ Հագէշի սահմանէն սկսելով կը հասնի մինչեւ գլուխ Բաքեյուսոյ: Այս երկրին հարաւային կողմը Բորթոկէղները և Անգղիացիք գաղթականութիւններ ունին. հիւսիսային կողմն անձանօթ է:

Հ. Ափրիկէի այս մասն ինչ երկիրներ կը պարունակէ:

Պ. Ափրիկէի այս մասը կը պարունակէ

1. Մոսլի: Այս երկիրը գրեթէ հասարակածին տակն է, և իբրեւ « համեմաբեր » երկիր հին տեներ երեւելի էր: Ժողովուրդը մահմետական է, աղէկ առուտուր ունի Արաբիոյ և Հնդկաստանի հետ: Այս երկիրն առաջ Այա և Ապէ կը կոչուէր:

2. Սե-անկի: Այս երկիրը Սոմալի հարաւային կողմն է, շատ լիճեր ունի, ժողովուրդը մահմետական է: 1858 էն ի վեր անկախ եղաւ:

3. Չանդիտ: Այս երկրին իշխանը Սուլթան կը կոչուի, մայրաքաղաքն է Չանդիտ (60,000), կղզւոյ մը վրայ: Այս երկիրն առաջ Չանկետը կը կոչուէր:

4. Մոլադի: Սեւահիլի հարաւային կողմը, Մատակասքարի դիմացը, Բորթոկալի կը վերա-

բերի . գլխաւոր քաղաքն է Մոզմպի ուր կը նստի Բորդոկայի կուսակալը :

5. Մֆալ : Մոզմպիի հարաւային կողմն է , նոյնպէս Բորդոկայի կը վերաբերի , գլխաւոր քաղաքն է Մֆալ : Այս երկիրն առաջ Մանոհոբա կ'ըսուէր :

6. Բաֆրա : Մոֆալայի հարաւային կողմն է : Բնակիչն է Բաֆր կոչուած ժողովուրդը որ կուսպաշտ է , բայց Ափրիկեցի Սեւ ցեղէն չէ : Այս ծովեզրին վրայ է Անգղիացւոց նախ կոչուած գաղթականութիւնը :

2. ԲԱԲ կամ ԲԱՐԵՅՈՒՅՈՅ երկերը

Հ. Բարեյուսոյ երկիրը մը Տէրութեան կը վերաբերի , բնակիչը մը չափ է , գլխաւոր քաղաքը մըն է :

Պ. Բարեյուսոյ երկիրը 1601ին Հոլանտացիներէն հիմնուած գաղթականութիւն է որ 1806ին Անգղիացւոց անցաւ : Բնակիչը 570,000 է , գլխաւոր քաղաքն է Բաբ (28,000) , Հնդկաստան գացող նաւերուն համար կարեւոր : Հոս կը նստի Անգղիացի կուսակալը :

Բարեյուսոյ երկիրն բնակիչներուն մէկ մասը Հոլանտացի է , մեծ մասը Հոլանտացի կոչուած Ափրիկեցի ցեղէն : Բարեյուսոյ երկիրն հիւսիսային կողմն են բուն Հոլանտացիները որ Ափրիկեցի շատ վայրենի ժողովուրդ են և այլ և այլ ցեղերու կը բաժնուին որ միշտ իրարու հետ պատերազմի մէջ են : Ասոնց մէջ քրիստոնէութիւն և կրթութիւն տարածելու շատ կ'աշխատին անգղիացի և ամերիկացի միսիոնարք :



ԴԱՍ ԽԹ .

3. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՈՎԵԶՐ

Հ. Արեւմտեան ծովեզր ըսելով Ափրիկէի մը մասը կը հասկցուի , քնն երկիրներ կը պարունակէ , գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Արեւմտեան ծովեզր ըսելով կը հասկցուի Ափրիկէի այն մասը որ Բարեյուսոյ արեւմտեան սահմանէն սկսելով կը հասնի մինչեւ Սենեկամպիա : Այս ծովեզրը կը կոչուի Կաթին , ժողովուրդը սեւամորթ ափրիկեցի է՝ շատ վայրենի : Երկիրը քանի մը ինքնիշխան տէրութիւններու կը բաժնուի , որոնց գլխաւորներն են Լանդոյ , Բանդոյ , Անկու և Պելուել : Այս վերջի երկուքին վրայ Բորդոկէզները մեծ ազդեցութիւն ունին :

Հ. Այս ծովեզրին վրայ յիշուելու արժանի ուրիշ քնն տէրութիւն կայ :

Պ. Այս ծովեզրին վրայ յիշուելու արժանի են

1. Անգղիոյ գաղթականութիւնը Միլեր Լեոն որուն բնակիչներն են գերութենէ ազատուած քրիստոնեայ սեւեր : Գլխաւոր քաղաքն է Չելոբա (10,000) : Հոս կը նստի Անգղիոյ կուսակալը :

2. Լիպոն , ազատ հանրապետութիւն , զոր Ամերիկացիք հիմնեցին 1822ին , և ազատուած սեւ քրիստոնեայ գերիներ ղրկեցին հոն՝ Ափրիկէի մէջ եւրոպական կրթութիւն տարածելու համար : Բնակիչն է 20 հազար կրթեալ և 700 հազար բնիկ սեւ ափրիկեցի : Գլխաւոր քաղաքն է Մանդի :

3. Ալանդ , բնիկ ափրիկեցի տէրութիւն մը ,

մայրաքաղաքը Գոմաստի (70,000) : Այս մասին մէջ ալ Անգղիացիք և Հոլանտացիք դաղթակա նուսթիւններ ունին :

4. Կ Ղ Զ Ի Բ

Հ. Ափրիկէի կղզիներն որոնք են :

Պ. Ափրիկէի կղզիներն են Հնդկաց ծովուն մէջ՝

1. Մոտոպորա, ուստի կ'ելլէ հալուէ, Արաբացոց ձեռքը :

2. Մոտակատար, 5 միլիոն բնակչով, շատ պաղաքեր : Առանձին թագաւորութիւն է, ժողովուրդը կէս քաղաքակիրթ, գլխաւոր քաղաքներն են՝ Գոմաստիս և Գոմարաս : Հոս քրիստոնէութիւնը շատ յառաջ կ'երթայ :

3. Գոմորեան կղզիք 18 հատ :

4. Մոտաբեան կղզիք որոնց գլխաւորներն են՝ Մոտրիտիս (առաջ Գոռիոյ կղզի կ'ըսուէր) 327 հազար բնակչօք, Անգղիացոց ձեռքը . Մեմփեան կղզիքն (առաջ Պորպոն կը կոչուէր) 210,000 բնակչօք, Գաղիացոց ձեռքը :

Ադրանդեան Ովկիանոսի մէջ՝

1. Մորթ Հեղինէ և Համբոյնոմ՝ Անգղիացոց ձեռքը :

2. Կոմեանյի կղզիները՝ Սպանիացոց և Բորդոկիզաց ձեռքը :

3. Կոմանէ քլիոյ կղզիք 67,000 բնակչօք, Բորդոկէզներուն ձեռքը :

4. Գոմարեան կղզիք ուր մշտնջենաւոր գարուն է, 250,000 բնակչօք, Սպանիացոց ձեռքը . գլխաւորներն են՝ Երկուի կղզիք և Դեմեթիֆօ :

5. Մոտերա կղզիք, 112,000 բնակչօք, Բորդոկէզներուն ձեռքը : Այս կղզիներէն կ'ելլէր Մատերա կոչուած աղնիւ գինին, բայց 1852ին որթերուն հիւանդութիւն ինկաւ և այդինքը ջնջուեցան :

6. Ալորեան կղզիք, 250,000 բնակչօք, Բորդոկիզաց ձեռքը :

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Դ Ա Ս Ծ .

Հ. Ամերիկայի բնակիչը որչափ է, երկիրը քանի կը բաժնուի :

Պ. Ամերիկայի բնակիչն է 420 միլիոն, կը բաժնուի Ա. Հիւսիսային, Բ. Մէքսիկո և Գ. Հարաւային Ամերիկա :

Հ. Ամերիկայի գլխաւոր ծովերը որոնք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր ծովերն են, Հիւսիսային կողմը՝ Մոտոպեալ Ովկեանս և Պեքսիկո ծովը : Արեւելեան կողմը՝ Ատլանտեան Ովկեանս և Անդեան կամ Բարբիտեան ծովը . Արեւմտեան կողմը՝ Խաղաղական Ովկեանս և Պեհրընկոյ ծովը :

Հ. Ամերիկայի գլխաւոր ծոցերը որոնք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր ծոցերն են Արեւելեան եզերքը՝ Հոտոնընի, Ս. Լաւրենտիոսի, Չիլէքիի, Մեքսիկոյի ծոցերը և Հոտոնընս ծոցը . Արեւմտեան եզերքը՝ Բոլիֆոնիոյ ծովածոցը :

Հ. Ամերիկայի գլխաւոր նեղուցները որոնք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր նեղուցներն են՝ Պեհ-

բնիւնեղուցը Ասիոյ և Ամերիկայի մէջտեղ. Լին-
տեար, Տե-էս, Գըմարէն, Լոս-ան-ճըս, և Պէլիէ նե-
ղուցները՝ Բրիտանական Ամերիկայի մէջ. Պա-
հա-նայէ ջրանցքը՝ Միացեալ Նահանգաց մէջ. Մա-
կէլանի նեղուցը՝ Բաղադոնիոյ հարաւային կողմը:

Հ. Ամերիկայի կղզիները որոնք են:

Պ. Ամերիկայի կղզիներն են Պաֆֆինի ծովի
կղզիները, Ս. Լա-րենտիոսի ծովի կղզիները, Լոն-
այլանդ, Պերտուգալի, Լո-հայեան, և Մեծ ու Փոք
Անդիլէան կղզիք՝ Ազլանդեան Ովկիանոսի մէջ.
Նոր Գիւրգիս, Մալդիւն, Մալկէլան, Ասորոս-
ճոյ կղզիք, Չիլէ, Խո-ան, Ֆերնանդէզ, Կալլաթա-
նազաղականին մէջ, և Պէնընիւս ծովան կղզիները:

Հ. Ամերիկայի թերակղզիները որոնք են:

Պ. Ամերիկայի թերակղզիներն են՝ Լապրապոր
և Նոր Սիլվաթա, Ֆլորիդա, Տէլլէֆէր, Բալիֆոնիա,
Են-տարան և Ալասկա:

Հ. Ամերիկայի գլխաւոր հրուանդանները ո-
րոնք են:

Պ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են
Ֆերո-էլ Կրէօնլանտի հարաւային կողմը.
Ոսորէնհոլմ, Չերլս Լապրատորի եզերքը.
Սեյուլ Նոր Սկովտիոյ եզերքը.
Իանգա՝ Ֆլորիդային հարաւային կողմը.
Բարոլ՝ Եուրազանի եզերքը.
Ս. Ռոտոս՝ Պրագիլիոյ եզերքը.
Ֆրոլորոս՝ Ամերիկայի հարաւային ծայրը.
Հոնո՝ Մակելանու արշիպելագոսին հարա-
ւային կողմը.

Պլանտոյ՝ Բերուի եզերքը.

Ս. Ղուկաս՝ Բալիֆոնիոյ եզերքը, և Արեմոսեան

Բլո-ի՝ Ամերիկային հիւսիսային արեւմտեան ծայրը:

Հ. Ամերիկայի լեռներն ու հրաբուխները ո-
րոնք են:

Պ. Ամերիկայի լեռներն են՝ Ալլէկանի գօտին՝
Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը, Ադա-
նա-ճո-թ լեռնոց գօտին, Բորալէան լեռնոց գօտին
որոյ ամենէն բարձր լեռը Չիկո-թո-յոյ կը կոչուի,
և Պրալէան լեռինք:

Հրաբուխներն են՝ Ս. Եղեա, հիւսիսային կողմը.
Բոթո-թո-թէրլ Մեքսիքայի մէջ, Բորո-թո-թի և Բե-
լիւս՝ Բոլուսիոյ մէջ, Արեմոսեան Բերուի մէջ:

Հ. Ամերիկայի գլխաւոր լիճերը կամ ծովակ-
ները որոնք են:

Պ. Ամերիկայի գլխաւոր լիճերը կամ ծովակ-
ներն են Սորէաց լիճը և Ունիթէկի՝ Բրիտանական
Ամերիկայի մէջ. Վերին լիճ, Միլիկան, Հո-րոն,
Իրիէ, Օնդորիոյ՝ Միացեալ Նահանգաց մէջ.

Նիւարակոս՝ միջին Ամերիկա.

Մարտաիոյ՝ Բոլուսիոյ մէջ. Դիլիտոս՝ Բե-
րուի մէջ. Բարոս՝ Պրագիլիոյ մէջ:

Հ. Ամերիկայի գլխաւոր գետերը որոնք են:

Պ. Ամերիկայի գլխաւոր գետերն են

1. Մադիսոն. կը թափի Մառուցեալ ծովը.

2. Նելսոն. կը թափի Հուստոնի ծոցը.

3. Ս. Լա-րենտիոս կամ Ս. Լորէնց. կը թափի

Ազլանդեան Ովկիանոսը.

4. Միլիկան և Ռեյ Նորթ. կը թափին Մէք-
սիքոյի ծոցը:

5. Օրէնտոյ, Ամազոնաց գետը, Իոտանդին, Ս. Ֆրան-
չիսո և Լա Բարոս. կը թափին Ազլանդեան Ով-
կիանոսը.

Մակարան. կը թափի Գարաբաբան ծովը.

Օրէկոն. կը թափի Խաղաղական Ովկիանոսը.

Քուլբարոյ. կը թափի Յալիֆոսնիոյ ծոցը:

Հ. Ամերիկայի մէջ ինչ երեւելի պարանոց կայ:

Պ. Ամերիկայի նշանաւոր պարանոցն է Բանա-
մայե պարանոցը որ հիւսիսային Ամերիկա հարա-
ւայնոյն հետ կը կապէ: Այս պարանոցը բանա-
լու պատրաստութիւնները սկսած են: Բանամայի
պարանոցը բացուելով Խաղաղական կամ Մեծ
ովկիանոսը պիտի միանայ Ազլանդեանին հետ:



ԴԱՍ ԾԱ.

Ա. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հ. Հիւսիսային Ամերիկա քանի տէրութիւն
կը պարունակէ:

Պ. Հիւսիսային Ամերիկա կը պարունակէ 4 տէ-
րութիւն, 1. Դանիական Հիւսիսային Ամերիկա կամ
Կրէճուս, 2. Բրէթանական Հիւսիսային Ամերիկա,
3. Հիւսիսային Միացեալ Նահանգները և 4. Մեքսիկոյ:

1. ԴԱՆԻԱԿԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԿԱՄ ԿՐԷՅՆԼԱՆՏ

Հ. Կրէճուսնտի բնակիչներն ինչ ցեղէ են:

Պ. Կրէճուսնտի բնակիչները Էսթիոյ կոչուած
վայրենի ցեղէն են: Հոս Դանիացիք քանի մը
գաղթականութիւն ունին: Միսիսնարաց ջանքով
էսթիմոներուն մեծ մասը Գրիստոնեայ եղած է:

2. ԲՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հ. Բրիտանական Ամերիկայի բնակիչը որչափ
է, ծաղկեալ մասը և գլխաւոր քաղաքները ու-
րմնք են:

Պ. Բրիտանական Ամերիկայի բնակիչը 4 1/2
միլիոն է: Այս երկրին հիւսիսային և արեւմտեան
մասը վայրենի է, ծաղկեալ մասն է արեւելեան
կողմը, և կը պարունակէ Գառարո, Լադրարոյի
ցամաքակղզին, Նոր Պրուսիա, Նոր Սիւլթիա և
Նիւ Յընթուս կղզին:

Գլխաւոր քաղաքներն են Փիլադէլֆի (60,000) և
Մանչեսթըր (110,000)՝ Գանտայի մէջ, Հալֆօքս (40,
000)՝ Նոր Սկոտլանդի մէջ:



ԴԱՍ ԾԲ.

3. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Հ. Ամերիկայի Միացեալ Նահանգաց վրայ ինչ
պատմական գիտելիք կայ:

Պ. Ամերիկայի Միացեալ Նահանգները 1600էն
ետքը սկսան ծաղկիլ անգղիական գաղթականու-
թիւններով, և Անգղիոյ իշխանութեան ներքեւ
էին, բայց անցեալ դարուն դէպ ՚ի վերջը ապրս-
տամբեցան, և 1773էն մինչեւ 1783 Անգղիոյ
դէմ շարունակ պատերազմելէ ետքը, անկախ
հանրապետութիւն եղան: Այս երկրը հիմա կը
բաղկանայ 37 նահանգներէ որոց իւրաքանչիւրն
ունի իւր առանձին կառավարութիւնը, բայց ա-

մենքը մէկ տէրութիւն կը կազմեն և ընդհանուր կառավարութիւն մը ունին: Օրէնսդիր իշխանութիւնը Քոնկրէս կոչուած ազգային ժողովին ձեռքն է որ կը բաղկանայ Երեւակուտէն և նահանգաց կողմէն զրկուած Պատգամաւորաց կամ երեսփոխանաց ժողովէն: Գործադիր իշխանութիւնը Նախագահին ձեռքն է որ շրջ տարին անգամ մը կը փոխուի: Գերի գործածող հարաւային նահանգները գերի չունեցող Հիւսիսայիննէրէն 1861ին ապստամբելով յաղթուեցան, և գերութիւնը ջնջուեցաւ (1865ին):

Զորքը խաղաղութեան ժամանակ 43,000 է, նաւատորմիդը կը բաղկանայ 46 նաւէ 426 թընդանօթով, առեւտրական նաւերն են 1864:

Հ. Միացեալ Նահանգաց բնակիչը հրչափ է, գլխաւոր նահանգներն և անոնց քաղաքները որոնք են:

Պ. Միացեալ Նահանգաց բնակիչը 32,100,000 է, գլխաւոր նահանգները և անոնց քաղաքներն են Հիւսիսային կողմը.

1. Մասսաչուզէթս նահանգ, գլխաւոր քաղաքը Պորթը (192,000):

2. Յոննէտքէտս նահանգ, գլխաւոր քաղաքը Նիւ-հէլն:

3. Նիւ-Եորթ նահանգ՝ 4 միլիոն բնակչով, գլխաւոր քաղաքը Ալպընի (63,000), Նիւ-Եորթ (1,000,000) Հոուստոնի բերանը. Ամերիկայի ամենէն մեծ վաճառաշահ քաղաքն է. Պըքնիւյ (95,000):

Միջին կողմը.

4. Բեննիլսնիս նահանգ՝ 2 1/2 միլիոն բնակչօք,

գլխաւոր քաղաքը Ֆիլադելֆիա, Տէլէվար գետին վրայ, (940,000), Ամերիկայի ամենէն աւելի գործարաններ ունեցող քաղաքն է. Հոս է ազգային Դրամատունը (Պանքա): Այս նահանգին մէջ կ'եւլէ կազ կոչուած Բէզըրը եղը որ կանթեղներու կը գործածուի:

Յ. Մերիլենդ նահանգ, բնակչաց հինկին մէկը Սեւ է. գլխաւոր քաղաքն է Պալթիմօր (352,000), ունի համալսարան: Հոմէականաց Եպիսկոպոսն Հոս կը նստի. Ուոշինգթըն (150,000). Հոս կը ժողովուի Գոնկրէս կոչուած ազգային ժողովը, Հոս է նաեւ Նախագահին պալատը և նաւարանը:

Հարաւային կողմը.

6. Յըլէթս նահանգ, գլխաւոր քաղաքը Դալաւա:

Այս նահանգը նեղ ցամաքակղզի է բուստէ (Ֆլորիդա), որ 200 հազար տարուան մէջ հազիւ գոյացած է, ինչպէս կ'ըսեն երկրաբանք:

Ծովածոցի նահանգներ.

7. Ալապամա նահանգ, գլխաւոր քաղաքը Մոնթգոմերի (36,000):

8. Լոնչէսնս նահանգ, գլխաւոր քաղաքը Նիւ-Օրլէնս (170,000). աշխարհիս վրայ բամբակի ամենէն մեծ վաճառանոցն է:

9. Դէլուաս, Ամերիկայի ամենէն մեծ նահանգն է, բայց բնակիչը քիչ:

Կեղրոնական նահանգներ.

10. Իւլինոյի նահանգ, գլխաւոր քաղաքն է Շիքագօ (268,000). 40 տարի առաջ վայրենիներու գեղ էր, հիմա աշխարհիս վրայ ցորենի ամենէն մեծ վաճառանոցն է:

11. Օհէյոյ նահանգ, գլխաւոր քաղաքը Սէն-Քիւնտըի. հոս տարին կէս միլիոն խոզ կը մորթուի, ուստի և Խաղաղաւ կը կոչուի:

12. Միսսուրի նահանգ, գլխաւոր քաղաքը Սէն-լուի (230,000), վաճառաշահ քաղաք Միսիսիբբի եզերքը. 1804ին 925 վայրենի բնակիչ միայն ունէր որ առուտուրի մէջ դրամի տեղ կաշոյ կտորուանք կը գործածէին:

Մեծ կամ խաղաղական Ովկիանոսի եզերքը.

13. Բալթիկոնի նահանգ. ոսկւոյ հանքեր ունի, ուստի 1864ին 84 միլիոն թալերի ոսկի հանուեցաւ: Շոգենաւք ասկէ ուղղակի ձափոն և Զին կ'երթան: Գլխաւոր քաղաքն է Մոն Յրանսօֆոյ:

Երկիրներ որ դեռ նահանգ չեն: Միացեալ Նահանգաց մէջ գաւառ մը 600,000 բնակիչ ունենալու է որ նահանգ համարուի:

1. Ուշիկիլն:

2. Ալատա կամ Ռոսիոյ Աւերիկա: Ռուսիա այս երկիրը 1867ին ծախեց Ամերիկայի: Ամերիկայի այս մասին կը վերաբերին Ալեգեան կղզիք 50 հազար բնակչօք:

4. Մ Է Ք Ս Ի Ք Ո Յ

Դ Ա Ս Ծ Գ .

Հ. Մէքսիքոյի վրայ ինչ պատմական գիտելիք կայ:

Պ. Սպանիացիք Ժ.Չ. դարուն սկիզբը տիրելով Մեքսիքոյի՝ գաղթականութիւն մը հաստատեցին, որ 1810ին ապստամբելով հանրապետութիւն եղաւ, և այնուհետեւ խռովութիւնները պակաս

չեղան: Այս խռովութիւններուն վերջ տալու համար Գաղիոյ օգնութեամբ Աւստրիոյ այժմու կայսեր եղբայրը Մաքսիմիլիան 1864ին գնաց հոն իբրեւ սահմանադրական կայսր, բայց հանրապետականաց նախագահին ժուարէղի ձեռքն իյնալով սպաննուեցաւ 1867ին, և Մեքսիքոյ հիմա դարձեալ հանրապետութիւն է:

Հ. Մեքսիքոյի բնակիչը որչափ է, գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Մեքսիքոյի բնակիչը 8,750,000 է, գլխաւոր քաղաքներն են՝ Մեքսիկոյ (200,000). շատ գեղեցիկ քաղաք է, ունի համալսարան. Վերաքրուշ (10,000), Բոնեյու (75,000), Բոնեբարոյ (48,000). Հոս սպաննուեցաւ Մաքսիմիլիան:

Բ. Մ Ի Զ Ի Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Դ Ա Ս Ծ Գ .

Հ. Միջին Ամերիկա քանի մասէ կը բաղկանայ:

Պ. Միջին Ամերիկա կը բաղկանայ 1. Յամատայի մասէ և 2. Արեմոսան Հնդկաստանի Արշիպելագոսին:

1. ՅԱՄՈՒՔՈՅԻՆ ՄԱՍԸ

Հ. Միջին Ամերիկայի ցամաքային մասին բնակիչը որչափ է, ինչ տէրութիւններ կը պարուսնակէ, և անոնց գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Միջին Ամերիկայի ցամաքային մասին բնակիչը 2,665,000 է, և կը բաղկանայ հինգ փոքր

Հանրապետութիւններէ և Անգղիացոց երկիր-
ներէն :

Հինգ Հանրապետութիւններն են

Ա. Կոստանտնուպոլիս, գլխաւոր քաղաքը Կոստանտնու-
(40,000) :

Բ. Սան Սալամար, գլխաւոր քաղաքը Սան Սալ-
լամար (20,000) :

Գ. Հոնոլուս, գլխաւոր քաղաքը Բոնոլուս
(8,000) :

Դ. Նիտարուս, գլխաւոր քաղաքը Լիտն (25,000) :

Ե. Բոսոր Ռիտ, գլխաւոր քաղաքը Սան Ժուզե
(25,000) : Անգղիացոց երկիրներն են Մոստիերոյ
և Հոնոլուսի գաղթականութիւնը :

2. ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԸ

Հ. Արեւմտեան Հնդկաստանի արշիպելագոսն
Բնչ կղզիներէ կը բաղկանայ :

Պ. Արեւմտեան Հնդկաստանի արշիպելագոսը
կը բաղկանայ երեք կղզեխումբէ որ են Ա. Պահամ
կղզիները, Բ. Մեծ և Գ. Փոքր Անդլէնտն կղզիները :
Այս խումբերուն մէջ գլխաւոր կղզիներն են,
Մեծ Անդլիւսաններէն՝

1. Բոսոր կղզին, գլխաւոր քաղաքը Համան
 $\frac{1}{2}$ միլիոն բնակչով : Այս քաղաքին մայր եկեղեց-
ւոյն մէջ է Կոլոմպոսի շիրմը :

2. Ճամայն $\frac{1}{2}$ միլիոն բնակչով, Անգղիոյ կը
վերաբերի, գլխաւոր քաղաքն է Բիլիլիլ (13,000) :

3. Սեւերու Հանրապետութիւնը Հոնդի, 708,
000 բնակչօք, գլխաւոր քաղաքը Սան Տոմիկոյ
(10,000) :

4. Բոսոր Ռիտ, 600,000 բնակչօք, գլխաւոր
քաղաքը Սան Ժոսան (18,000) :

Փոքր Անդլիւսանց մէջ անուանի է Մարթինի-
կղզին որ Գաղիացոց կը վերաբերի :

Գ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ ԵՆ.

Հ. Հարաւային Ամերիկա Բնչ երկիրներ կը
պարունակէ :

Պ. Հարաւային Ամերիկա կը պարունակէ 10
տէրութիւն .

1. Բրազիլիան Հանրապետութիւնները,
2. Բե-
րու,
3. Պելէն,
4. Չիլի,
5. Բարակոս,
6. Ուրու-
կոս,
7. Լա Բարա,
8. Պարագւէ,
9. Կոլոմ,
10. Ալաբ հարաւային Ամերիկա :

1. ԳՈՒՈՒՄՊԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Գոլումպեան Հանրապետութիւնները ու-
նը են :

Պ. Այս Հանրապետութիւններն են Ա. Նոր Կր-
ուս, Բ. Վենէզուէլա, Գ. Էկուադոր :

Ա. Նոր Կրանատայի բնակիչն է 28,000,000,
գլխաւոր քաղաքներն են՝ Պոկոս (40,000), ունի
Համալսարան. Բանամ (9,000) :

Բ. Վենէզուէլայի բնակիչն է 1,600,000,
գլխաւոր քաղաքն է Բարտոս (50,000). Մարտի-
կոյ՝ Համանուն լճին քով. ունի Համալսարան :

Գ. Էքսուզորի բնակիչն է 1,100,000 , գլխաւոր քաղաքն է Քէրոյ (76,000) , ունի համալսարան :

2. ԲԷՐՈՒ

Հ. Բէրու քնն տէրութիւն է :

Պ. Բէրու հանրապետութիւն է, բնակիչը 2,500,000 , գլխաւոր քաղաքներն են Լիմա (121,000) , Արեթիքա (40,000) :

3. ՊՈԼԻՒԻՒԱ

Հ. Պոլիւիա քնն տէրութիւն է :

Պ. Պոլիւիա հանրապետութիւն է, բնակիչը 2 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Լա Բաշ (76,000) , Բադոս (23,000) :

4. ՉԻԼԻ

Հ. Չիլի քնն տէրութիւն է :

Պ. Չիլի հանրապետութիւն է, բնակիչը 2,100,000 . գլխաւոր քաղաքներն են՝ Սանթիաօ (115,000) , ունի համալսարան . Վալքաթաիչոյ (70,000) :

5. ԲԱՐԱԿՈՒԱ

Հ. Բարակուա քնն տէրութիւն է :

Պ. Բարակուա հանրապետութիւն է, բնակիչը 1,400,000 գլխաւոր քաղաքն է Ասուսիոն (Համբարձում) : Բարակուա այս վերջին տարիներուն մէջ Պրազիլիոյ հետ պատերազմի բռնուեցաւ . հանրապետութեան նախագահը Լորէշ 1870 ին

մեռաւ կոուի մէջ, և հիմա երկիրն անիլիսան և աւերեալ վիճակի մէջ է :

6. ՈՒՐՈՒԿՈՒԱ

Հ. Ուրուկուա քնն տէրութիւն է :

Պ. Ուրուկուա հանրապետութիւն է, բնակիչը 400,000 , գլխաւոր քաղաքն է Մանդեմետոյ (120,000) :

7. ԼԱ ԲԼԱԴԱ

Հ. Լա Բլադա քնն տէրութիւն է :

Պ. Լա Բլադա , Արժաթի հանրապետութիւն ալ կըսուի, բնակիչը 1,737,000 , գլխաւոր քաղաքն է Պուենոս Այրէս (180,000) :

8. ՊՐԱԶԻԼԻԱ

Հ. Պրազիլիա քնն տէրութիւն է :

Պ. Պրազիլիա ձերակուտէ և երեսփոխանական ժողովէ բաղկացեալ սահմանադրական կայսրութիւն է, բնակիչը 11,780,000 , գլխաւոր քաղաքներն են՝ Րիոյ Դե Ժանէյրոյ (600,000) , Պահիա (160,000) , Բէլաճոյոյոյ (90,000) :

Պրազիլիա հարաւային Ամերիկայի ամենէն մեծ և բարեկարգ տէրութիւնն է . երկիրը վերջին աստիճան բարեբեր . ունի սուրճ , շաքար , բամբակ , ծխախոտ , քարայր , որիչ , սուկի , լանոսկի (բլազին) և աղամանդ :

9. ԿՈՒՅԱՆԱ

Հ. Կույանայ ինչ երկիր է :

Պ. Կույանայի ներքին կողմերը վայրենի Ամերիկացուց ձեռքն է , ծովեղերքը միայն կը վերաբերի երեք եւրոպական տէրութեանց , Անգղիոյ , Հոլանտայի և Գաղիոյ : Բոլոր Կույանայի բնակիչը 1/2 միլիոն է :

Գլխաւոր քաղաքներն են , Անգղիոյ մասին մէջ՝

Ճորճրասն (155,000) :

Հոլանտայի մասին մէջ՝

Բարսմարիոյ (16,000) :

Գաղիոյ մասին մէջ՝

Գայէն (3,000) :

Հ. Հարաւային Ամերիկայի տէրութեանց վրայ ինչ գիտելիք կայ .

Պ. Հարաւային Ամերիկայի տէրութեաններուն բոլորն ալ առաջ Սպանիոյ և Բորգոկալի կը վերաբերէին . այս դարուն սկիզբը հետզհետէ ապստամբելով անկախ տէրութիւններ եղան , բնակիչներն են հռոմէական կաթոլիկ , և լուսաւորութեան մասին շատ ետ մնացած են :

10. ԱՉՍ ՀՈՐԱԻՍՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հ. Ազատ Հարաւային Ամերիկա ինչ երկիրներէ կը բաղկանայ :

Պ. Ազատ Հարաւային Ամերիկա կը բաղկանայ

1. Բարադինոյի և 2. Հոյ երկրն :

1. Բարադինոյի Ամերիկայի ցամաքին Հարաւային ծայրը շատ ցուրտ երկիր է . բնակիչները երկայնահասակ , ձաղկահեր և շատ տղեղ վայ-

րենի մարդիկ են , և Բարադինոյ կը կոչուին :

2. Հոյ երկիրը , Բարադինոյի Հարաւային կողմը , կղզիներու խումբ է , բնակիչը վայրենի և ապուշ : Այս կղզիներուն մօտ են Ֆլորիդա կոչուած անբնակ կղզիները , ուր Անգղիացիք 700 հոգիէ բաղկացեալ գաղթականութիւն մը ունին :

ՈՎԿԻՍՆԻԱ

ԳԱՍ ԾՁ.

Հ. Ովկիանիա երկրիս որ մասին կ'ըսուի , և բանի կ'ը բաժնուի :

Պ. Ովկիանիա կ'ըսուի Խաղաղական Ովկիանոսի մէջ Արեւելեան Ասիոյ և Արեւմտեան Ամերիկայի մէջտեղ դանուած շատ մը մեծ և վոքր կղզիներուն : Ովկիանիա կը բաժնուի 1. Աստրալոյն և 2. Բոլիւնդի :

Հ. Աւստրալազիա որն է :

Պ. Աւստրալազիա կը կոչուին 1. Աստրալիա կամ Նոր Հոլանդա ըսուած ցամաքը և 2. Երեւ Դեմ կղզիները՝ Ա. Նոր Կալէն , Բ. Նոր Սեւեալ և Գ. Վանդիմանի կղզին կամ Դասմանիա :

Հ. Աւստրալազիոյ տարածութիւնը և բնակիչը որչափ է , ժողովուրդն ինչ ցեղէ է , գլխաւոր քաղաքները որնք են :

Պ. Աւստրալազիոյ բնակիչը 2 միլիոն է , բնիկ ժողովուրդը վայրենի է , բայց Անգղիացիք շատ գաղթականութիւններ ունին , մանաւանդ Աւստրալիոյ Հարաւային եզերքը , ուր գլխաւոր եւրոպական քաղաքներ են Սիդնի (110,000) . Հոս կը նստի կուսակալը . Մելբուրն (170,000) , ունի

Համալսարան. Առէլաէր (40,000), Հոպարիշ (20,000) Վանտիմէնի կղզւոյն մայրաքաղաքն է:

Հ. Բոլինէզիա ձրն է:

Պ. Բոլինէզիա կը կոչուին Աւստրալազիայէն դէպ արեւելք Մեծ Ովկիանոսի մէջ գտնուած խումբ խումբ կղզիներ, որոնց գլխաւորներն են՝

- 1. Նոր Բրիտանիա, 3. Մարիանեան կամ Աւալալոց կղզիք, 3. Բարոլմեան կղզիք, 4. Սոլոմոնեան կղզիք, 5. Նոր Գալեպոսիա, 6. Նոր Հեյրէրեան կղզիք, որոնց գլխաւորն է Հոգոյն Սըքոյ կոչուած կղզին, 7. Մալլաբուան կամ Մարալաիթի կղզիք, 8. Ֆիլիպին կղզիք, 9. Բարեկաճաբեան կղզիք, 10. Նասալաբոց կամ Սամա կղզիք, 11. Բուտի արշիպելագոսը, 12. Ընկերութեան կղզիք որոնց գլխաւորն է Դանիթի, 13. Բոնորու կամ Տափարակ կղզիք, 14. Մեկոնա կամ Մարտիզեան կղզիք, 15. Սանթոնիլ կղզիք:


Հ. Բոլոր այս կղզեխումբերուն վրայ ինչ մասնաւոր գիտելիք կայ:

Պ. Այս կղզիներուն մէկ մասը փոքր ըլլալուն համար Միտրոնէզիա կը կոչուին:

Այս կղզիներէն ոմանց բնակիչներն ըստ մասին կամ բոլորովին քրիստոնեայ եղած են: Քրիստոնեայ բնակիչ ունեցողներուն մէջ երեւելի են Սանտուիչեան կղզիք, որոնց գլխաւորն է Հասայի: Սանտուիչիք որոնց թիւը 200 հազարի չի հասնիր՝ Հիմա եւրոպական կերպով ծաղկեալ Քրիստոնեայ ժողովուրդ են, եկեղեցիներ, զբոսայրոցներ, տպարաններ և լրագիր ունին: Մայրաքաղաքն է Հոնոլուլու (14,000): Ամերիկացիք ասոնց վրայ մեծ ազդեցութիւն ունին:

ԲՆ Ա. Կ ԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



ԴԱՍ Ա.

Հ. Բնական աշխարհագրութիւնն ինչ բանի վրայ կը խօսի:

Պ. Բնական աշխարհագրութիւնը կը խօսի երկրիս երեսը բաղկացնող կամ անոր վրայ գտնուող տեղաբնական և փոփոխական մարմնոց վրայ, ինչպէս նաեւ մթնոլորտին կամ օդոյն վրայ որ երկիրս կը պատէ և երկրիս կը վերաբերի:

Հ. Գործարանաւոր և անգործարան մարմիններ որոնք են:

Պ. Գործարանաւոր մարմիններ են աստղերը և շնորհները (անասուն և մարդ), ասոնցմէ ուրիշ մարմիններ, ինչպէս արեւը, Ժողովներ, օդը, ջուրը, անգործարան են:

Ա. ԱՆԳՈՐԾԱՐԱՆ ՄԱՐՄԻՆՔ

Հ. Երկրիս երեսն ինչ նիւթերէ կը բաղկանայ:

Պ. Երկրիս երեսը կը բաղկանայ հողէ և ջուրէ:

Հ. Երկրիս երեսը բաղկացնող հողը քանի տեսակ է:

Պ. Երկրիս երեսը բաղկացնող հողը հինգ տեսակ է, որ իրարու վրայ խաւ խաւ դիզուած կը գտնուին, և կը կոչուին նախին, նախնական,

Երկրորդական, երրորդական, և չորրորդական գետիններ: Այս խաւերն այլեւայլ ժամանակ հրոյ և ջրոյ ազդեցութեամբ հազարաւոր դարերու մէջ կազմուած են, և այս խաւերուն շատերն իրենց մէջ գործարանաւոր մարմնոց մնացորդները կը պարունակեն քարացեալ վիճակի մէջ: Այս տեսակ տեսակ հողերուն վրայ կը խօսին ընդարձակ և հիմնական կերպով երկրաբանութիւն և հանքաբանութիւն կոչուած գիտութիւնները:

Հ. Երկրիս երեսը կազմող հողը կամ գետինը ինչ ձեւերով կ'երեւայ մեզի:

Պ. Երկրիս երեսը կազմող հողը մեզի կ'երեւայ իբրեւ Դաշտ, Լեռ, Կոշի, հովիտ, Կիրճ, Ելշտ, Կարանոց, և այլն, որոնց վրայ կը խօսի քաղաքական աշխարհագրութիւնը (Տես այս գիրքին քաղաքական մասին մէջ էջ 10 և 11):



ԴԱՍ Բ.

Հ. Երկրիս երեսը ծածկող ջուրը քանի տեսակ է:

Պ. Երկրիս երեսը ծածկող ջուրը երկու տեսակ է՝ Զովային և ցամաքային:

Հ. Ծովային ջուրն ինչպէս է:

Պ. Ծովային ջուրն ընդհանրապէս դառն և աղի է. բայց դէպ ի հիւսիս և միջերկրական ծովերու մէջ ջուրը քիչ աղի է, ինչպէս Պալգիկ և Սեւ ծովերուն ջուրը, քանզի ասոնց տարածութիւնը Ովկիանոս կոչուած մեծ ծովերուն նայելով փոքր է, և անուշ ջրոյ շատ գետեր կը թափին ասոնց մէջ. թէպէտ կասպից ծովին, որ միջերկրական

ծով է, ջուրը քան զՈվկիանոսի ջուրն աղի է: Հ. Ծովերու մէջ ինչ բաներ կը գտնուին:

Պ. Ծովերու մէջ ալ, ինչպէս ցամաքի վրայ, կան գաշտեր, լեռներ, գետեր. կան նաև տեսակ տեսակ սունկեր և անասուններ, մանաւանդ անթիւ տեսակ մեծ և փոքր ձկուներ և խեցեմորթք:

Հ. Ծովերուն բարեխառնութիւնն ինչպէս է:

Պ. Ծովերուն ջուրը երթալով կը ցրտանայ դէպ ի յատակը, նոյնպէս դէպ ի բեւեռներն, ուր ջուրը միշտ սառած է, մանաւանդ ձմեռները, մինչեւ 10 աստիճան, իսկ ծովածոցները սառած են մինչեւ 30 աստիճան լայնութեան: Բեւեռներուն մօտ սառուցի ահադին կտորուանք կը լողան ջուրին երեսը մինչեւ 40 աստիճան բեւեռէն ասդին: Հարաւային բեւեռին սառած մասն աւելի է քան հիւսիսային բեւեռինը:

Հ. Ծովին ջուրն ինչ շարժումներ ունի:

Պ. Ծովին ջրոյն շարժումներն են՝ Բնաշարժական շարժումը, յորձանք և Խաղաղ:

Հ. Մթնոլորտական շարժումն ինչ է:

Պ. Մթնոլորտական շարժումը կը պատճառի հովէ, որ ծովին երեսը միայն կը յուղէ, քանզի մեծամեծ ալէկոծութեանց ատեն անգամ, մինչեւ 33 մէթր վար, ծովին ջուրը հանդարտ է:

Հ. Յորձանքն ինչ է:

Պ. Յորձանքը մաս մը ջուր է ծովուն մէջ, որ գետի պէս հոսելով կ'երթայ: Գլխաւոր յորձանքներն են հիւսիսայինները որ հիւսիսէն դէպ ի հասարակած կու գան, և հիւսիսահասարի յորձանքները որ կ'երթան արեւելքէն դէպ արեւմուտք: Այս յորձանաց պատճառ հովերը կամ երկ-

րիս իւր առանցից վրայ դառնալը կը կարծուի : Յորձանքները երբեմն պտոյտ ընելով ահագին անդունդներ կը բանան ծովուն մէջ և մօտ դացող նաւերը մէջ կ'առնուն , ինչպէս է Մալարոս Նորուեկիոյ հիւսիսային կողմը :

Հ. Խաղաքքն ինչ է :

Պ. Խաղաքք կ'ըսուի տեղ տեղ որոշեալ ժամերու մէջ ծովի ջուրին ցամաքէն քաշուիլն ու նորէն գալը : Այս շարժմանց առաջինը *դեղադուր* թէն է երկրորդը *հիւլիս-գո-թէն* կ'ըսուի : Կը կարծուի թէ այս շարժումը լուսնոյ և արեգական ձգիչ զօրութենէն է :



ԴԱՍ Գ.

Հ. Յամաքային ջուր ըսելով ինչ կը հասկցուի , և քանի տեսակ ցամաքային ջուր կայ :

Պ. Յամաքային ջուր ըսելով կը հասկցուին *անյիւրեղ* յառաջ եկած անոյշ ջուրերը , ինչպէս աղբիւրներ , առուններ , գետեր : Երկրիս վրայ անթիւ գետակներ և գետեր կան , որոնց գլխաւորները կը յիշէ քաղաքական աշխարհագրութիւնը : (Տես քղբկն . աշխ . էջ 22, 23 :)

Հ. Անձրեւն ինչ է :

Պ. Անյիւրեղ կ'ըսուի այն ջուրը զոր շոգիներէ կազմուած ամպերը կը տեղան երկրիս վրայ :

Անձրեւներն երկրիս վրայ ամեն տեղ միօրինակ չեն . հասարակածին և ծովեզերաց մօտ անձրեւներն աւելի առատ են քան անոնցմէ հեռու գանձող տեղեր , թէպէտ դէպ 'ի հիւսիս անձրեւային աւուրք աւելի յաճախ են :

Արեւադարձներուն մէջտեղ , կ'ախայրեցեալ

գօտւոյն տակ գրեթէ ամեն տարի որոշեալ ամիսներու մէջ կ'անձրեւէ առատ . այսպիսի անձրեւները կը կոչուին Պարթերական *անյիւրեղ* : Այս անձրեւներէն երկրիս այն մասերուն մէջ գրեթէ բոլոր գետերը յորդելով կ'ողողեն ընդարձակ երկիրներ : Այսպէս Յեղոս գետն ամեն տարի որոշեալ ժամանակ կ'ողողէ Եգիպտոսի հարուստ հովիտը . նոյնպէս հարաւային Ամերիկայի մէջ տեղ տեղ , ինչպէս Բարակուա , ուր գետինը տափարակ է առանց զառ 'ի վայրի , անձրեւներէն յորդեալ գետերը տարածուելով ահագին լիճ մը կը ձեւանան :

Հ. Ուրիշ ինչ ցամաքային ջուրեր կան :

Պ. Յամաքային ջուրեր են նաեւ *ճովաներ* կամ *Քրիստալներ* : Լիճերէն ոմանց մէջէն գետեր կ'անցնին , ինչպէս Քոստանցի և ձիներայի լիճերէն . ուրիշներէն դուրս ամենեւին ջուր չելլեր , ինչպէս Կասպից ծովէն և Արալու ծովակէն : Այս երկու ծովակներուն ջուրը ծովի ջուրի պէս աղի է :

Հ. Ջերմուկներն ինչ են :

Պ. Ջերմուկները տաք ջուրեր են որ երկրիս ծոցէն կը բղխեն , և իրենց մէջ խառն ունին հանքային նիւթեր , ինչպէս ծծումբ , երկաթ , կայլն : Այս ջուրերուն տաքութեան պատճառը , ինչպէս կը կարծուի , երկրիս կեդրոնին ջերմութիւնն է . և կայ ջերմուկ որուն ջուրը եռացեալ ջրոյ տաքութիւնն ունի : Գրեթէ երկիր չկայ որ ջերմուկային ջուրեր չունենայ որ իրբեւ դեղ կը գործածուին : Անուանի և շատ յաճախեալ ջերմուկները Գերմանիոյ , Գաղիոյ և Փոքր Ասիոյ մէջ են , ուր նշանաւոր են Պրուսայի ջերմուկները :



ԴԱՍ Ե.

2. Մթնոլորտն ինչ է :

Պ. Մթնոլորտ կը կոչուի օդը զոր կը շնչենք, և որ 70-90 քիլոմէտր բարձրութեամբ կը պատէ երկիրս, և այլեւայլ կազանման հեղուկներէ կը բաղկանայ :

2. Օդին գլխաւոր յատկութիւններն ինչ են :

Պ. Օդը երկրիս երեսին վրայ 770 անգամ աւելի թեթեւ է քան զջուր. բայց այս թեթեւութիւնը միօրինակ չէ ամեն տեղ. լեռներու վրայ աւելի թեթեւ է քան ծովին երեսը և դաշտերու վրայ :

Օդին տաքութիւնը նոյնպէս միօրինակ չէ ամեն տեղ. այս տաքութիւնը մթնոլորտին վերի մասերուն մէջ շատ նուազ է. այս է պատճառը որ բարձր լեռանց գլուխները ձիւնով և սառուցով պատած են միշտ : Հասարակածին տակ լեռներուն վրայ ծովին հաւասարութենէն վեր մինչեւ 4,900 մէթր կը սկսի ձիւնը. լայնութեան 60երորդ աստիճանին տակ՝ մինչեւ 1,100 մէթր : Տեղւոյ մը աւելի կամ նուազ տաքութեան մէկ պատճառն անոր աւելի կամ նուազ հեռի ըլլալն է հասարակածէն : Դարձեալ լեռներուն հարաւային կողմն աւելի տաք կ'ըլլայ քան միւս կողմերը. նոյնպէս արեւմտեան ծովեզերք աւելի տաք են քան արեւելեանները : Միեւնոյն լայնութեան տակ Ամերիկա աւելի ցուրտ է քան Եւրոպա և Ափրիկէ, նոյնպէս հիւսիսային կիսագունան աւելի բարեխառն է քան հարաւայինը : Ովկիանոսի կղզիները ձմեռն աւելի տաք են և ամառն աւելի զով քան ուրիշ երկիրներ :

2. Մթնոլորտին վերաբերեալ ուրիշ ինչ երեւոյթներ կան :

Պ. Մթնոլորտին վերաբերեալ ուրիշ շատ երեւոյթներ կան, ինչպէս լուսնային ցոլանք, ձիւնալեռ, ելեպրոպան երեւոյթներ օդին մէջ, զոր օրինակ կոչուի, հիւսիսային որ ճառագայթարձակ աղեղ է, և Եւրոպայի ու Ամերիկայի մէջ հիւսիսային բեւեռին մօտ, նաեւ հարաւային բեւեռին կողմերը, շատ անգամ գիշերները կը տեսնուի : Մթնոլորտական երեւոյթ է նաեւ մոլորակային արեւմտեան մէկ ծայրին դէպ 'ի հիւսիս դառնալը : Բոլոր այս բաներուն վրայ կը խօսի բնական գիտութիւնը :

2. Հողն ինչ է :

Պ. Հողը մթնոլորտին շարժումն է, և մթնոլորտին շարժման պատճառը տաքն ու ցուրտն է :

2. Քանի տեսակ հող կայ :

Պ. Կան հասարակած և փոփոխական հողեր : Հասարակածն կ'ըսուին այն հողերը որ միշտ միեւնոյն սառնամբ կը փչեն : Այս հողերն արեւադարձներուն մէջտեղ, կամ հասարակածին տակ կ'ըլլան. ինչպէս են պիտի կոչուած հողերը հասարակածին տակ, և մոտին կոչուած հողերը Հընդկային Ովկիանոսին մէջ : Այրեցեալ գօտոյն տակ սոսկալի փոթորիկներ ալ կը պատահին : Բարեխառն գօտիներուն մէջ փչող հողերն անկան են և որոշ սառնամբ մը չունին. աս երկիրներն ալ գատ են նաեւ մրրիկներէ :

2. Վիշապ կամ թաթառ ինչ է :

Պ. Երբ երկու հողեր հակառակ ուղղութեամբ իրարու կը հանդիպին՝ ձիւնայ կամ ընթաց (խօրթում) կոչուած պտուտակ հողը յառաջ կու գայ :

Այս մըրիկը սոսկալի է. Ովկիանոսին ջուրը կը ծծէ, նաւեր կը խորտակէ, լիճեր կը ցամքեցնէ, ահազին մարմիններ առնելով հեռու տեղեր կը տանի, և շատ տեղեր հեղեղներով կ'ողողէ :



ԴԱՍ Զ.

Բ. ԳՈՐԾԱՐԱՆԱՒՈՐ ՄԱՐՄԻՆԻՔ

Հ. Այլեւայլ գօտիներու և կլիմաներու տուն կերը որմնք են :

Պ. Սառուցեալ գօտւոյն մէջ յառաջ կու գան, շատ քիչ տեսակ տունկեր, ինչպէս մահուր, լըբ, սոչադոյ տունկեր, թոռի կամ մայրա: Տեղ տեղ ցաբառի (մացառ որմէ աւել կը շինուի) և ուրի ալ կը բուսնին, բայց դաճած կը մնան: Լաբոնիոյ մէջ կը բուսնին հոճոր և խաւար (զալզալաթ) միայն. Հոն կան նաեւ եղեւնի անտառներ:

Բարեխառն գօտւոյն մէջ հիւսիսային սահմանին վրայ կը բուսնին սարոյն, մայրը, կոեւնին (գաթրան աղածը): Դէպ 'ի հարաւ գալով կը բուսնին ոգին (գայրն աղածը), կոշին, հոցին, կնյնին (գարա աղած), թիթին (օխլամուր), նոճին, թեղը (մանթար աղածը): 60 երորդ լայնութեան աստիճանին տակ կը սկսի ինչորեւին, աւելի դէպ 'ի հարաւ' կեռուեւնին, ապա դանջեւին, աւելի մօտենալով դէպ արեւադարձները՝ կը գտնենք սալբեւին, շիթաւիեւնին, ընկոյն, որմը, թիթին, յիթեւին և նարնջեւին որ այրեցեալ գօտւոյն տակ ալ կ'ըլլայ: Ցորեւը բարե-

խառն գօտւոյն տակ ամեն տեղ կը գտնուի. իսկ որեւն ու եփեղարեւը՝ հարաւային դին միայն:

Այրեցեալ գօտւոյն տակ կը բուսնին հիւսիսային և հարաւային: Հոն ծառերը գրեթէ մշտադաւար են և զօրեղ: Այս գօտւոյն մէջ կան տեղեր ուր կաղնին մեր կաղնիներուն կրկին բարձրութիւնը և մեր շուշանին նման ծաղիկ ունի: Այս գօտւոյն մէջ կը բուսնին շաբրէ եղեւն, որճեւն, որմաեւն, հոց, աստոյն, հարմաւի (վանիլեա), կնաւնի (դարչին), ղնին, պղպղի, աստրի և ուրիշ համեմներու առնակերը:

Բայց այս բաժանումը տեղերուն դիրքին նայելով երբեմն կը տարբերի. զոր օրինակ այրեցեալ գօտւոյն տակ լեռանց կողերուն վրայ կը գտնուին բարեխառն գօտեաց տունկերը, լեռներուն գլուխն ալ ցրտային գօտեաց տունկերը միայն. ինչպէս նաեւ բարեխառն գօտիներու մէջ կան ցած տեղեր ուր այրեցեալ գօտւոյն տունկերէն ոմանք յառաջ կու գան:



ԴԱՍ Է.

Հ. Այլեւայլ գօտիներու անասունները որմնք են:

Պ. Անասուններու այլեւայլ տեսակներէն ոմանք հիւսիսային սառուցեալ գօտիներուն մէջ միայն կրնան ապրիլ, ինչպէս են սոյոսի որմը, բն կոչուած այժեամբ և հարաւային պոլեար: Դէպ 'ի հիւսիս, անտառային և ամայի տեղեր կը զբտուին սոյոսի սիսը (զագում), կշտիսը (զէրտէ-

վա), Կոնգրես (գրուստուղ), և մաշկեակ (տէրտ) ունեցող ուրիշ անասուններ:

Կէր ձկան (պալէնա) և ֆոլէ (տէնիզ տանասը) և ծովային փոփոխ (րինկա) հայրենիքը Սառուցեալ ծովը է:

Բարեխառն գոտիները յատուկ կենդանիներ չունին, շունչ, յին, եղը, եղը, ուրիշ մարդուն հետ ամեն կլիմա կ'երթան: Այս գոտին շատ քիչ ֆլասակար անասուններ ունի. գլխաւորներն են սըլը, ֆայը և սըթոփն. ընդհակառակն տկար և անմեղ անասնոց տեսակները շատ են, ինչպէս են ճագարը, նապաստակը, եղջերուն, շատ տեսակ նափուկ թռչուններ: Գաղնու թռչունք հիւսիսէն և հարաւէն կու գան:

Մեծաւ մասամբ այրեցեալ գոտւոյն տակ են աճաղին և ֆլասակար անասունք, ինչպէս սըթոփն, լոփը, յովը, Բորնին, օյեր, Կոնգրէլուներ: Անվընաս թռչուններ և չորքոտանիներ ալ կան այրեցեալ գոտւոյն մէջ, ինչպէս վայելմը, պոլոնը, փիլը, ափեղջիւրը, յիփեփին, աւուսը, սալը որ բարեխառն գոտւոյ մէջ ալ կը գտնուի: Այրեցեալ գոտին ունի նաեւ փայլուն միջատներ, գեղեցկափետուր թռչուններ, ինչպէս պոլոնը, փլոթոթը, դրոփոնը, և այլք:

Պէտք է գիտնալ որ Ամերիկա մեր ցամաքին մեծ չորքոտանիները չունի:

Վ Ե Ր Ձ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Յ Ա Ն Կ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



| | Երե- |
|---|------|
| ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ | 5 |
| ԵՒՐՈՊԱ | 17 |
| Ա. Հարաւային Եւրոպա | 28 |
| 1. Յունական ցամաքակղզի | 28 |
| Ա. Եւրոպայի թափ | 30 |
| Բ. Յունաստան | 38 |
| 2. Իտալական ցամաքակղզի | 39 |
| 3. Իբերեան կամ Սպանիական ցամաքակղզի | 43 |
| Ա. Սլոնի | 43 |
| Բ. Լոնդոնի և Փարիզի | 46 |
| Բ. Միջին Եւրոպա | 48 |
| 4. Գաղիա կամ Ֆրանսա | 48 |
| 5. Հելլետիա կամ Չուիցերի | 53 |
| 6. Հոլանտա | 55 |
| 7. Բեղգիա | 58 |
| 8. Գերմանիա | 59 |




| | Երէ- |
|--|------|
| 1. Բրոսիւն | 61 |
| 2. Պոսիւն | 63 |
| 3. Սառսիւն | 64 |
| 4. Վիւրճեմպէրի | 64 |
| 5. Պոսիւն | 65 |
| 6. Հէս | 66 |
| 7. Ալան և Լըրէն | 66 |
| 9. Աստրո-Ունկարական կայսրութիւն | 67 |
| Գ. Հիւսիսային արեւմտեան Եւրոպա | 73 |
| 10. Սքանտինաւեան ցամաքակղզի | 73 |
| 11. Դանիա կամ Տանիմարքա | 75 |
| 12. Մեծն Ֆրիտանիա | 76 |
| Դ. Արեւելեան Եւրոպա | 80 |
| 13. Բուսիա | 80 |
| ԱՍԻԱ | 83 |
| Ա. Հարաւային Ասիա | 87 |
| 1. Ասիական Թուրքիա | 87 |
| 2. Արաբիա | 90 |
| 3. Իրան | 91 |
| 4. Հնդկաստան | 92 |
| 5. Հնդկաց Արշիպեղագոսը կամ Մայեզիա | 94 |
| Բ. Միջին Ասիա | 95 |
| 1. Թուրքեստան կամ Ազատ Թաթարիստան | 95 |
| 2. Կովկասիա | 95 |
| Գ. Հիւսիսային Ասիա կամ Սիպերիա | 96 |
| Դ. Արեւելեան Ասիա | 96 |





| | Երէ- |
|--|------|
| 1. Զին | 96 |
| 2. ճաբոն | 97 |
| ԱՓՐԻԿԷ | 99 |
| Ա. Հիւսիսային Ափրիկէ | 101 |
| 1. Եգիպտոս | 101 |
| 2. Նուբիա | 102 |
| 3. Հապեղ կամ Եթովպիա | 102 |
| 4. Պերպերիստան | 102 |
| Ա. Թրէք-լէ | 103 |
| Բ. Թուրան | 103 |
| Գ. Ալճէրէ | 103 |
| Դ. Մարոկո | 103 |
| 5. Սանարա | 104 |
| 6. Սենեկամպիա | 104 |
| 7. Սուտան | 104 |
| Բ. Հարաւային Ափրիկէ | 105 |
| 1. Արեւելեան ծովեզր | 105 |
| 2. Քաբ կամ Քարէյուսոյ Երկիրը | 106 |
| 3. Արեւմտեան ծովեզր | 107 |
| 4. Կղզիք | 108 |
| ԱՄԵՐԻԿԱ | 109 |
| Ա. Հիւսիսային Ամերիկա | 112 |
| 1. Դանիական հիւսիսային Ամերիկա կամ Կրեօնյանս | 112 |
| 2. Ֆրիտանական հիւսիսային Ամերիկա | 113 |
| 3. Հիւսիսային միացեալ նահանգները | 113 |

| | Երև. |
|--|------|
| 4. Մերսիքոյ | 116 |
| <i>Բ. Միջին Ամերիկա</i> | 117 |
| 1. Ցամաքային մասը | 117 |
| 2. Արեւմտեան Հնդկաստանի Արշիպելագոսը | 118 |
| <i>Գ. Հարաւային Ամերիկա</i> | 119 |
| 1. Քոլումպեան հանրապետութիւնները | 119 |
| 2. Բերու | 120 |
| 3. Պոլիւիա | 120 |
| 4. Զիլի | 120 |
| 5. Բարակուա | 120 |
| 6. Ուրուկուա | 121 |
| 7. Լա Բլադա | 121 |
| 8. Պրագիլիա | 121 |
| 9. Կուլանա | 122 |
| 10. Ազատ հարաւային Ամերիկա | 122 |
| ՈՎԿԻԱՆԻԱ | 123 |
| ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ | 125 |
| <i>Ա. Անգործարան մարմինք</i> | 125 |
| <i>Բ. Գործարանաւոր մարմինք</i> | 132 |











Յ Ա Ն Վ Գ Ր Ո Յ

Ի ԳՐԱՏԱՆ ՅՈՎԱՆՓՍՅ ԳՍՎԱՅԵՍԱՆ

(Յողմադրանը 100 դրոշի հաշով)

ԳՐ. ՓՐ.

| | |
|--|------|
| Այրենարան , Հեզարան եւ Ընթերցարան | 20 |
| Աշխարհագրութիւն Քաղ. Բնա. Գարագաշեան | 5 |
| Աշխարհագր. Բնութ. Բնա. Քաղ. Գարագաշ. | 45 |
| Աշխարհագր. « « « Ս. Միրայէլ | 42 |
| Գրագիտութիւն սածկուն Ե. Մուրառեանի | 45 |
| Գեղագրութիւն կորնեան Հայ. Գղղ. Յն. Տձ. | 8 |
| Գեղագրութիւն Մակուայի տիպ | 45 |
| Երգարան նոր կամ Քնար Հայաստանի | 40 |
| Ընթերցարան կամ Գաստիարակ. Գարագաշ. | 5 |
| Ընթերցարան կամ Կախագիտելիք Ս. Փափագ. | 40 |
| Թուարանութիւն ընդարձակ Տ. Պօզանեան | 20 |
| Ժողովրդական Մատենադարան Ա. Բ. Գ. մաս | 6 |
| Հատրնիք քաղաւոր ՚ի նախնեաց Գրգշ. | 20 |
| Հեզարան | 50 |
| Մանր ուսմունք քրիստոնէական Գ. Մարկոս. | 4 |
| Նոր ընթացք գրարտու լեզուի Մուրառեան | 4 |
| Պատմ. Սրբազան Ս. Փափագեան | 40 |
| Պարտք Տղայոց | 5 |
| Սրբազան պատմ. Ա. Գարագաշ. | 9 |
| Սկզբունք դատարանական Ա. հոր. | 40 |
| Ընդգամ ճէտլէլի | 5 |
| Փոյրիկ քարտուղար կամ Կամականի | 45 |
| Փերականութիւն գործնական Գարագաշ. | 45 |
| « ընդարձակ « | 45 |
| « համառօտ « | 8 |
| « ըստ Օւլէնտօրֆի, Գաղղի- | |
| կրէն եւ Հայկրէն Գարագաշ. | 50 |
| Փերականութիւն Նիշմանեանի Հայկրէն | 40 |
| « « « Գաղ. Հայ. | 45 |
| « ԼԵՐԵՐԻ « « | 42 |
| Փերական քաղմապատկեր կամ Այրենարան | 4 20 |
| Փերական կամ Այրենարան հին ոճով | 45 |